# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (2077) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 16, 2022
VOLUME 42, NO. 27 (2077) SATURDAY JULY 16, 2022

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Նիկոլ Փաշինեան Հեռախօսազրոյց Ունեցած է Էրտողանի Հետ
## Երեւան Կ'ակնկալէ Յառաջիկայ Ամիսներուն Կեանքի Կոչել Ձեռք Բերուած Հայ-Թրքական Պայմանաւորուածութիւնները





*Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայեփ Էրտողանի հետ: Սա շուրջ 30 տարի դիւանագիտական յարաբերութիւններ չունեցող ու փակ սահմաններով ապրող երկու երկիրներու ղեկավարներու առաջին հեռախօսազրոյցն է:*

*Երկու երկիրներու ղեկավարները ընդգծած են հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին կարեւորութիւնը, ինչ որ պիտի նպաստէ նաեւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման, շնորհաւորած են միմեանց Ատհայի եւ Վարդավառի տօներուն առթիւ:*

*2018-ին հաղորդուած էր Փաշինեան-Էրտողան հեռախօսազրոյցի մասին, սակայն պաշտօնական Երեւանը զայն հերքած էր: Իսկ նախորդ Սեպտեմբերին Թուրքիոյ նախագահը յայտնեց, որ Հայաստանի վարչապետը իրեն հանդիպման առաջարկ կատարած է Վրաստանի վարչապետին միջոցով:*

*Փաշինեան եւ Էրտողան այսօր ունեցած հեռավար զրոյցին մէջ ակնկալիք յայտնած են, որ Յուլիս 1-ին իրենց երկիրներու յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ժամանակ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները շուտ կեանքի կը կոչուին: Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչները վերջին հանդիպման հետեւանքով հասած են պայմանաւորուածութեան երկու հարեւան երկիրներու սահմանը բանալ երրորդ երկիրներու քաղաքացիներու համար, ինչպէս նաեւ Թուրքիա-Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ բեռնափոխադրումներ իրականացնել՝ օդային ճանապարհով:*

*Փաշինեան-Էրտողան հեռախօսազրոյցէն յետոյ պաշտօնական Երեւանը կը յայտարարէ, թէ կ'ակնկալէ շատ կարճ ժամանակի մէջ՝ յառաջիկայ ամիսներուն արդէն կեանքի կոչել ձեռք բերուած պայմանաւորածութիւնները՝ երրորդ երկիրներու քաղաքացիներու համար բանալ ցամաքային սահմանը, Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումներ մեկնարկել: Բանակցութիւններուն մէջ Հայաստանի յատուկ ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեանի փոխանցմամբ՝ նախապատրաստական երկկողմանի գործընթաց դեռ չկայ, բայց շուտով պիտի մեկնարկելէ:*

*«Սրանք, բնականաբար, դրական պայմանաւորուածութիւններ*

Շար.ը էջ 5

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Նոյեմբերի Ընտրութիւնները եւ Ամերիկայի Քաղաքական Օրակարգը

Յառաջիկայ Նոյեմբերին տեղի պիտի ունենան նախագահական կիսաշրջանի ընտրութիւնները: Պատմականօրէն իշխանութեան վրայ եղող կուսակցութիւնը գոնկրէսական աթոռներ կը կորսնցնէ այդ ընտրութիւններուն: Դեմոկրատները, որոնք մեծամասնութիւն են Գոնկրէսի երկու պալատներէն ներս եւ Սպիտակ Տունը կը պատկանի իրենց, գալիք ընտրութիւններուն մեծ հաւանականութեամբ կորսնցնեն իրենց չնչին առաւելութիւնը Ներկայացուցիչներու Տունէն եւ Ծերակոյտէն ներս: Այս կանխատեսումներուն հիմնական պատճառը այն է որ, նախագահ Ճօ Պայտընի ժողովրդականութիւնը, ըստ տարբեր հարցախոյզերու, 40 տոկոսի շուրջ է: Այս անկումը հետեւանք է պէնզինի գիներու բարձրացման եւ սպառողական ապրանքներու սղաճին: Ամերիկացիք ընդհանրապէս կը քուէարկեն իրենց գրպանին համաձայն, իսկ ներկայիս ժողովուրդի դժգոհութիւնը մեծ է երկրի տնտեսութեան վիճակին նկատմամբ, թէեւ անգործութեան մակարդակը իջած է 3.6 տոկոսի, իսկ ամէն ամիս հարիւր հազարաւոր նոր աշխատատեղեր կը բացուին Ամերիկայի տարածքին: Սակայն, ժողովուրդի մօտ կայ մտահոգութիւն՝ ապագայի նկատմամբ:

Այս բոլորը կու գան մեծապէս ամրապնդելու Հանրապետականներու ընտրական դիրքերը: Սակայն, վերջին ամիսներուն օրակարգի վրայ յայտնուեցան հրատապ նոր հարցեր, որոնք կրնան ազդել ընտրութիւններու արդիւնքներուն վրայ:

Յունուար 6-ի իրադարձութիւնները ուսումնասիրող գոնկրէսական յատուկ յանձնաժողովի հրապարակային լսումները կը հեռարձակուին հեռատեսիլներու վրայ եւ միլիոնաւոր մարդիկ առաջին անգամ ըլլալով կը տեղեկանան որ, Գափիթոլի շէնքին վրայ կատարուած յարձակումը ինքնաբուխ իրադարձութիւն մը չէ եղած, այլ կը կրէր կազմակերպուած բնոյթ: Ըստ վկայութիւններու, ընտրութիւններու արդիւնքները մերժող նախկին նախագահն ու իր շրջապատը օրեր առաջ ծրագրած են այդ յարձակումը՝ օգտագործելով նաեւ ծայրայեղ աջ միլիսիաներ, որոնք կարողացան ներխուժել

Շար.ը էջ 6

## Աննախադէպ Աւելցած Են Այլ Երկիրներ Ապրող Հայերու Դիմումները՝ ՀՀ Քաղաքացիութիւն Ստանալու Համար

*ՀՀ ոստիկանութիւնը յայտարարութիւն տարածած է, որուն մէջ կը նշուի, որ Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութեան Անձնագրային եւ Վիզաներու Վարչութիւնը եւ Տարածքային Անձնագրային Ծառայութիւնները կ'աշխատին գերծանրաբեռնուած կարգով, ինչ որ պայմանաւորուած է շարք մըմ գործօններու միաժամանակեայ առկայութեամբ:*

*«2022 թուականը էապէս տարբերւում է նախկին տարիներից, քանի որ աննախադէպ աւելացել են օտարերկրեայ պետութիւններում բնակուող մեր հայրենակիցների ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար դիմումները: Համեմատութեան համար անհրաժեշտ է նշել, որ եթէ 2021 թուականի Յունուար-Յունիս ամիսներին ՀՀ քաղաքացիութիւն ստանալու դիմումների քանակը կազմել է 3448, ապա 2022 թուականի նոյն ժամանակահատուածի համար այն կազմել է 9917 (մօտ երեք անգամ աւելի)», ըսուած է Ոստիկանութեան յայտարարութեան մէջ:*

*«Անհամեմատ մեծացել են նաեւ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու (փոխանակելու) համար ներկայացուող դիմումները: Դիմումատուների մեծ քանակ են կազմում օտարերկրեայ պետութիւններում բնակուող ՀՀ քաղաքացիները, որոնք ամռան ընթացքում գտնուելով Հայաստանի Հանրապետութիւնում՝ դիմում են ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու կամ իրենց ժամկէտանց անձնագրերը փոխանակելու համար», մասնաւորապէս նշուած է յայտարարութեան մէջ:*

*Բացի վերը թուարկուածէն, այս տարի աւելցած է նաեւ երկար ժամանակով Հայաստանի մէջ բնակելու եւ աշխատելու նպատակով ՀՀ ժամանող օտարերկրացիներու թիւը, որոնք Հայաստանի մէջ իրենց բնակութիւնը օրինականացնելու, հաշուառուելու, ինչպէս նաեւ հանրային ծառայութիւններու համարանիշ ստանալու նպատակով կը դիմեն Անձնագրային եւ Վիզաներու Վարչութիւն կամ Տարածքային Անձնագրային Ծառայութիւններ՝ անհրաժեշտ փաստաթուղթերը ձեւակերպելու համար:*

## Պայտըն Ծերակոյտի Հաստատման Ներկայացուցած է Հայաստանի Մէջ ԱՄՆ Նոր Դեսպանին Թեկնածութիւնը



Հայաստանի մէջ ԱՄՆ նորանշանակ դեսպան Քրիսթինա Քուինն

*Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտըն Հայաստանի մէջ նոր դեսպանի պաշտօնին համար Ծերակոյտին ներկայացուցած է Ուքրանիոյ մէջ ԱՄՆ գործերու նախկին հաւատարմատար Քրիստինա Քուինի թեկնածութիւնը: Այս մասին կը յայտնէ Սպիտակ*

Շար.ը էջ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԱՄՆ Նախագահի Կարեւոր Այցն Ու Հայաստանի Կարեւոր Հետեւութիւնը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*ԱՄՆ նախագահ Ջօ Բայդենը Մերձաւորարեւելեան ռեգիոն մեկնելուց առաջ յայտարարել է, որ Սաուդեան Արաբիա իր այցի նպատակը այդ երկրի հետ յարաբերութիւնը կարգաւորելն է, որպէսզի ստանայ նաւթարդիւնաբերող այդ երկրի աջակցութիւնը բենզինի բարձր գների պայմաններում: Ուկրաինական ճգնաժամով յարուցուած տնտեսական եւ էներգետիկ ճգնաժամը էական խնդիրներ է առաջացրել արեւմտեան տնտեսութիւնների, այդ թւում ԱՄՆ համար, որտեղ բենզինի գինը հասել է աննախադէպ բարձրութեան՝ մէկ գալոնի դիմաց գրեթէ 5 տոլար: Ընդ որում, իրավիճակն այնպիսին է, որ առկայ է հետագայ գնաճի միտում: Գործնականում «աւտոմեքենաների վրայ» ընթացող կեանքով ապրող ամերիկեան հանրութեան համար այդ հանգամանքը ունի չափազանց մեծ նշանակութիւն, որովհետեւ մեքենան ԱՄՆ-ում շքեղութիւն կամ ցուցադրութեան միջոց չէ, այլ գործնական անհրաժեշտութիւն մի շարք պատճառներով:*

*ԱՄՆ նախագահը անկասկած հիանալի է պատկերացնում խնդիրը եւ դրանից է բխում այն, որ նա ՍԱ այցից առաջ գործնականում բաց տեքստով է ամերիկացիներին յայտնում դրա հիմնական նպատակը, բաւականին թափանցիկ կերպով ակնարկելով նաեւ, որ պատրաստւում է այդ խնդրին «զոհաբերել» ժողովրդավարական օրակարգը: Բայդենը յայտարարել է, որ գիտէ ՍԱ իր այցի հետ կապուած տարակոյսների մասին եւ յայտարարել է, որ ժողովրդավարութեան արժէքների հանդէպ իր վերաբերմունքը յայտնի է բոլորին, այդ օրակարգը մշտապէս առկայ է իր արտերկրեայ այցերում: Միաժամանակ, ԱՄՆ նախագահը բաւականին թափանցիկ կերպով ակնարկել է, որ ներկայումս ունի լուծելու առաւել կարեւոր խնդիր՝ հասնել նրան, որ ՍԱ-ն կայացնի նաւթի արդիւնահանումն աւելացնելու որոշում, այդ կերպ ազդելով գնաճի միտման վրայ: Ի վերջոյ, հակառակ պարագայում Բայդենի վարչակազմը էական խնդիրներ կ՚ունենայ թէ ամիսներ անց սպասուող Կոնգրէսի միջանկեալ ընտրութիւններում, թէ նաեւ յետոյ՝ 2024-ի նախագահի ընտրութեանը: Առաւել եւս, որ այս պահին գոնէ նրա գլխաւոր մրցակից Թրամփը չի յապաղում օգտուել իրավիճակից եւ օրերս բարձրաձայնել է առաջադրուելու իր մտադրութեան մասին, նշելով, թէ իր նախագահ լինելու պարագայում չէին լինի թէ ուկրաինական պատերազմը, թէ գնաճն ու տնտեսական անկումը:*

*Այլ կերպ ասած, ԱՄՆ նախագահը մերձաւորարեւելեան տուրնէի ընթացքում այցելելով ՍԱ, որի արքայազն Սալմանի հետ լուրջ հակադրութիւնն առաջացաւ տարիներ առաջ Թուրքիայում ՍԱ դեսպանատանը սպաննուած սաուդցի լրագրողի Խաշոգիի դէպքից յետոյ, որն ըստ տեղեկութեան տեղի էր ունեցել հենց արքայազն Սալմանի հրամանով, ԱՄՆ նախագահը գործնականում փորձում է լուծել իր իշխանութեան հարցը, ինչի համար պատրաստ է որոշակիօրէն աչք փակել սաուդեան կառավարող ընտանիքի հակաժողովրդավարական բնոյթի վրայ: Այստեղ իհարկէ միջազգային քաղաքականութեան համար նշանակալի անցուդարձից զատ, որ կապուած է իհարկէ նաեւ ՌԴ ու Իրանի հանդէպ ՍԱ հետ յարաբերութեան միջոցով ճնշում բանեցնելու ԱՄՆ նախագահի մտադրութեան հետ, առկայ է եւս մէկ հանգամանք, որին արժէ, որպէսզի ուշադրութեան արժանացնի Հայաստանը:*

*Բանն այն է, որ ԱՄՆ նախագահի գործողութիւնների այդ դրուագը վկայում է, որ ժողովրդավարութեան հանգամանքը լինելով բացարձակ ուղենիշ երկրի ներքին ընտրութեան, ներքին կեանքի կազմակերպման, հասարակութեան արդիականացման տեսանկիւնից, այդուհանդերձ չի կարող լինել արտաքին քաղաքականութեան կայուն եւ հիմնարար գործիք կամ խաղաքարտ, ուզենք, թէ ոչ, դուր գա դա, թէ ոչ: Այդ առնչութեամբ պատրանք ունեցողները իրենք են պատասխանատու մնում իրենց միամտութիւնների համար:*

*Հետեւաբար, Հայաստանի համար ժողովրդավարութիւնը իբրեւ արդիականացման առաւել մեծ հնարաւորութիւն ընձեռող մեխանիզմ լինելով կարեւոր առաջնահերթութիւն, այդուհանդերձ պէտք է լինի ոչ թէ արտաքին քաղաքականութեան ուղիղ միջոց, այլ միջոց արտաքին քաղաքականութեան գործիքակազմի հարստացման ներքին կարողութիւնները առաւել արագ դինամիկայով եւ արդիւնաւէտ ծաւալով հարստացնելու համար:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

**Այն փուլում, երբ որոշակիօրէն ակտիւացել են Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները, տեղաշարժեր կան տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցուածքների ապաշրջափակման հարցում, Թեհրանը չէր կարող խօսք չասել իր համար գերկարեւոր հիւսիսային սահմանների մօտ տեղի ունեցող գործընթացների վերաբերեալ, եւ դա արեց իր ազգային անվտանգութեան գերագոյն խորհրդի քարտուղարի այցի միջոցով**

# Արեւելք-Արեւմուտքը Չպէտք Է Հակադրել Հիւսիս-Հարաւին

ԱՐՄԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Իրանի Իսլամական Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան գերագոյն խորհրդի քարտուղար Ալի Շամխանիի գլխաւորած պատուիրակութեան այցը Հայաստան ունէր իր յստակ ուղերձները՝ Հարաւային Կովկասի յետպատերազմեան աշխարհաքաղաքական իրավիճակի համատեքստում: Երեւանում նա պաշտօնի բերումով կրկնեց Իրանի բարձրագոյն ղեկավարի՝ արդէն բազմիցս հրապարակած դիրքորոշումներն Արցախի Հանրապետութեան եւ Հայաստանի շուրջ ստեղծուած իրավիճակի ու զարգացումների վերաբերեալ: ՀՀ վարչապետի հետ հանդիպման ժամանակ կողմերը մտքեր են փոխանակել տարածաշրջանային կայունութեան եւ անվտանգութեան ապահովման ուղղութեամբ: Ալի Շամխանին ընդգծել է, որ Իրանն անընդունելի է համարում տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխութեան որեւէ փորձ, եւ նշել, որ իր երկիրը եւս սատարում է ենթակառուցուածքների ապաշրջափակման գործընթացին՝ պետութիւնների տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան պահպանման շրջանակներում:*

*Այն փուլում, երբ որոշակիօրէն ակտիւացել են Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները, տեղաշարժեր կան տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցուածքների ապաշրջափակման հարցում, Թեհրանը չէր կարող խօսք չասել իր համար գերկարեւոր հիւսիսային սահմանների մօտ տեղի ունեցող գործընթացների վերաբերեալ, եւ դա արեց իր ազգային անվտանգութեան գերագոյն խորհրդի քարտուղարի այցի միջոցով: Լիովին օրինաչափ էր, որ իրանցի պաշտօնեայի քննարկումների հիմնական մասը վերաբերում էր տնտեսական համագործակցութեան, մասնաւորապէս՝ հիւսիս-հարաւ տնտեսատրանսպորտային ուղղութեան խնդիրներին: Մասնաւորապէս՝ վարչապետի հետ հանդիպման ժամանակ կարեւորուել է առեւտրաշրջանառութեան, ենթակառուցուածքների, էներգետիկայի, արդիւնաբերութեան եւ այլ ոլորտներում առկայ փոխգործակցութեան ընդլայնման անհրաժեշտութիւնը: Ալի Շամխանին ՀՀ ԱԽ քարտուղարի հետ այլ անվտանգային հարցերից զատ քննարկել է նաեւ հայ-իրանական տնտեսական յարաբերութիւնները: Առանձին անդրադարձ է կատարուել Իրանի Ջաբահար նաւահանգստի տնտեսական եւ քաղաքական գործօնին, դրա համատեքստում՝ Սիւնիքի դերի եւ կարեւորութեան հարցերին: Կողմերը վերահաստատել են Մեղրու ազատ տնտեսական գօտու եւ հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցքի շրջանակներում համագործակցութեան պատրաստակամութիւնը: Արդէն տխուր աւանդոյթ է դարձել, որ Հայաստանում կամ արտերկրում գործընկեր պետութիւնների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպումների նախաշեմին կամ ընթացքում Ադրբեջանն իր մասին յիշեցնում է սահմանային միջադէպերով: Իրանի Իսլամական Հանրապետութեան ազգային անվտանգութեան գերագոյն խորհրդի քարտուղարի՝ Հայաստան կատարած այցը բացառութիւն չեղաւ: Մինչեւ պաշտօնեայի այցը՝ ադրբեջանական գինուժը Նախիջեւանի ուղղութեամբ հրադադարը խախտեց Խաչիկ գիւղի մօտ, իսկ այցի օրը՝ Ելփին գիւղի: Երկու դէպքում էլ թշնամին թիրախաւորել էր քաղաքացիական մեքենաները, որոնք թափանցիկ ակնարկ էին պարունակում: Ընդ որում՝ եթէ Խաչիկի ուղղութեամբ հրադադարի ռեժիմի խախտման փաստն Ադրբեջանը փորձեց հերքել, Ելփինի միջադէպի վերաբերեալ հերքում չհետեւեց: Ալի Շամխանիի այցը փաստեց, որ Իրանը վճռական է տրամադրուած Հայաստանով անցնող հարաւ-հիւսիս տրանսպորտատնտեսական հաղորդակցութեան ուղու զարգացման ուղղութեամբ, որի զգալի մասն անցնելու է Հայաստանի տարածքով: Ադրբեջանը եւ Թուրքիան այս փուլում չեն ուզում ցոյց տալ իրենց անհամաձայնութիւնն այս նախաձեռնութեանը՝ սահմանային կրակոցներով յիշեցնելով, որ տարածաշրջանում իրենք էլ կան, սակայն վաղ թէ ուշ ստիպուած են լինելու համակերպուել տարածաշրջանային հաղորդակցութեան այս ուղու գործարկման հետ եւ աւելի ճիշտ կ՚անեն այն չհակադրել արեւելք-արեւմուտք հաղորդակցութեան ուղուն, այլ համադրելու եզրեր փնտռեն տարածաշրջանի երկրների միջեւ համագործակցութեան շրջանակներում:*

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net
(626) 797-7680

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

# Հայաստանի Կառավարութիւնը Կը Ծրագրէ Ստեղծել Առանձին Արտաքին Հետախուզական Մարմին. Արմէն Գրիգորեան

*Հայաստանի մէջ կը նախատեսուի ստեղծել արտաքին հետախուզական մարմին: Այս մասին ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարՀայաստանի մէջ կը նախատեսուի ստեղծել արտաքին հետախուզական մարմին: Այս մասին ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը «Ներքին Գործերու Նախարարութեան ստեղծումը, քաղաքացիական վերահսկողութեան կարեւորութիւնը» թեմայով խորհրդարանական լսումներու ծիրին մէջ ունեցած ելոյթին ընթացքին:*

*Գրիգորեանը Ներքին Գործերու Նախարարութեան ստեղծումը, բարեփոխումները դիտարկեց անվտանգութեան համակարգի ծիրին մէջ: «ՀՀ կառավարութիւնը ԱԺ-ի մեր քաղաքական թիմի հետ 3 ուղղութեամբ լայնածաւալ բարեփոխումներ է իրականացնում: Դրանցից մէկը Ոստիկանութեան բարեփոխումներն են, միւսը՝ ՊՆ-ի, ԶՈՒ բարեփոխումները: Այս բարեփոխումների ծիրին մէջ մենք կը ծրագրենք ստեղծել առանձին արտաքին հետախուզական մարմին: Եւ Անվտանգութեան Խորհրդի գրասենեակն արդէն գործընկերների հետ քննարկումներ է սկսել այս նոր կառոյցի ձեւաւորման համար: Ոստիկանութեան բարեփոխումները այս լայն ծիրին մէջ պէտք է դիտարկել: Դրա հիմքում դրուած է նաեւ ժողովրդավարական հասկացողութիւնը», ըսաւ Գրիգորեան:*

*Ան ընդգծեց, որ կառավարութիւնը 2018 թուականէն սկսեալ սկսած է անվտանգութեան ոլորտի ժողովրդավարացման գործընթաց, ինչ որ կարեւոր է անվտանգութեան, կայունութեան եւ կարողութիւններու աւելացման տեսանկիւնէն:*




Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

*Ընդհանուր անվտանգութեան համակարգի տեսանկիւնէն ան կարեւոր համարեց Ոստիկանութեան եւ Արտակարգ Իրավիճակներու Նախարարութեան գործառոյթներու՝ մէկ նախարարութեան մէջ համատեղումը:*

*«Անվտանգութեան Խորհրդի նիստերին, օրինակ, յաճախ լինում են թեմաներ, որոնք առնչւում են ԱԻՆ-ին, ԱԻՆ-ի գործառոյթներ, որոնք առնչւում են պաշտպանութեանը: Անվտանգութեան Խորհրդում ԱԻՆ-ը ներկայացուած չէր: Բայց այժմ այսպիսի բարեփոխումներով նաեւ արդիւնաւէտութիւն է ստեղծւում, քանի որ ներքին գործերի նախարարը, որպէս նաեւ արտակարգ իրավիճակների ոլորտում քաղաքականութիւնը եւ գործառոյթները համակարգող մարմին, հնարաւորութիւն կ'ունենայ ներգրաւուած լինելու ԱԽ-ում քաղաքականութեան մշակման գործընթացում եւ հարցերը լուծելու մասով», ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը:*

# Պաշտպանութեան Առաջին Փոխնախարարը Պիտի Ըլլայ Նաեւ Գերագոյն Շտաբի Պետը

*Ազգային Ժողովը արտահերթ նիստով, 55 կողմ ձայնով, առաջին ընթերցմամբ, ընդունեց Պաշտպանութեան մասին օրէնքին մէջ կառավարութեան առաջարկած փոփոխութիւններու փաթեթը:*

*Նախագիծը Ազգային Ժողովին մէջ ներկայացուց պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը:*

*«Սա դասեր քաղելու նախագծերի փաթեթ է, որովհետեւ մենք դառը փորձ ունենք, կեանքը ցոյց է տուել, որ շատ հարցերում մենք, թերացումների պատճառով, մեր խնդիրները չենք կարողացել լուծել: Խնդիրն ամենեւին անձերի մէջ չէ, խնդիրը համակարգային է, եւ սա այն ճանապարհն է, որի միջոցով մենք փորձելու ենք համակարգային փոփոխութիւնների գնալ եւ համակարգը դարձնել աւելի սահուն եւ ղեկավարման օղակը դարձնել վերից վար», նախքան քուէարկութիւնը ըսաւ նախարարը:*

*Անդրադառնալով քննադատութեան, թէ սա Զինուած Ուժերը նախարարին ենթարկելու փորձ է, Պապիկեան հակադարձեց՝ ոչ թէ փորձ է, այլ յստակ քայլ է՝ «զինուած ուժերը պէտք է ենթարկուեն պաշտպանութեան նախարարին եւ գերագոյն հրամանատարին»:*

*Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները չմասնակցեցան ո՛չ նիստին, ո՛չ քուէարկութեան: Պապիկեան ըսաւ, որ ընդդիմադիրներու առարկայական առաջարկները չէր մերժեր, իսկ «պատատակերուն եւ թաքուն քննադատութիւնները պիտի չընդունի ի գիտութիւն»:*

*Վարչապետ Փաշինեանի կառավարութիւնը Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետը, որ Սահմանադրութեամբ զինուորական ամենաբարձր պաշտօնեան է, փոփոխութեամբ կը դարձնէ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ, բայց ան պիտի չըլլայ նախարարը փոխարինող անձ:*

*Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի վերջին պետը Արտակ Դաւթեանն էր, ան ազատուած է պաշտօնէն այս տարուայ Փետրուարին: Անկէ ետք Գլխաւոր Շտաբի պետի պաշտօնակատար դարձած է առաջին տեղակալ Կամօ Քոչունցը, որ հիմա ալ կը շարունակէ պաշտօնավարել:*

# Տարօն Մարգարեանն Ու Անոր Ընտանիքի Անդամները Ապօրինի Գոյքի Բռնագանձման Գործով Կանչուած Են Դատախազութիւն

*ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը ծանուցագրեր ուղարկած է Երեւանի նախկին քաղաքապետ, ԱԺ «Պատիւ Ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տարօն Մարգարեանին եւ անոր փոխկապակցուած շահագրգիռ անձերու, մասնաւորապէս անոր կնոջ՝ Գոհար Սարգսեան/Մարգարեանին, մօրը՝ Սուսաննա Մարգարեան/Պօղոսեանին, ինչպէս նաեւ որդիներուն՝ Նահապետ եւ Անդրանիկ Մարգարեաններուն: Սոյն գործով որպէս շահագրգիռ անձեր ծանուցագրեր ուղարկուած են նաեւ Կարինէ Մարգարեան/Պետրոսեանին եւ Աստղիկ Մարգարեան/Ուլիխանեանին: Յիշեալ անձեր, ըստ ծանուցագրերուն, պէտք է Յուլիս 14-ին, ըստ ծանուցագրերուն մէջ նշուած ժամերու, ներկայանան ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւն:*



Երեւանի նախկին քաղաքապետ Տարօն Մարգարեան

*Նշենք, որ 2013 թուականին Երեւանի քաղաքապետ ընտրուելէ յետոյ, երբ արդէն քաղաքապետի պաշտօնին պաշտօնավարած Մարգարեանը ներկայացուց իր գոյքի եւ եկամուտներու յայտարարագիրը, հասարակութիւնը ապշահար էր վերջինիս աճուելի ունեցուածքի փաստէն: «Մտածելու բան ունեն նրանք, ովքեր ազնուօրէն չեն յայտարարագրել իրենց ունեցուածքը», յայտարարած էր «ազնիւ եղանակով», «հալալ քրտինքով» հարստացած Տարօն Մարգարեանը:*

*2017 թուականին ալ Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրութիւններու արդիւնքներով դարձեալ քաղաքապետ դարձած Մարգարեանի յայտարարագիրը, մեղմ ըսած, համեստներէն չէր. երկու բնակարան, մէկ անհատական բնակելի տուն, մէկ ամառանոց, երկու ինքնաշարժի տնակ, մէկ հասարակական նշանակութեան շինութիւն, մէկ արտադրական նշանակութեան շինութիւն, 250 միլիոն ՀՀ դրամ, 45 հազար տոլար, 50 հազար եւրօ եւ այլն:*

# Դատախազութիւնը Կը Զգուշացնէ Զերծ Մնալ Պետական Դաւաճանութեան Յանգեցնող Կամայ Թէ Ակամայ Գործողութիւններէ

*ՀՀ Գլխաւոր Դատախազութեան մօտ ուսումնասիրուած են 2020 թուականի Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան եւ զինուած ուժերուն կողմէ սանձազերծուած պատերազմին աղէտալի հետեւանքներուն այս կամ այն չափով յանգեցնելուն վերաբերող, ինչպէս նաեւ յետպատերազմեան շրջանին ՀՀ եւ Արցախի Հանրապետութեան պաշտպանունակութեան դէմ պետական դաւաճանութեան դէպքերով իրականացուող քննութեան ընթացիկ վիճակը:*

*Քննուած եւ քննուող քրէական գործերու ուսումնասիրութեամբ պարզուած է, որ բոլոր պարագաներուն մէջ ՀՀ քաղաքացիները յայտնուած են ատրպէյճանական յատուկ ծառայութիւններու աշխատակիցներու ուշադրութեան կեդրոնին, նիւթական օգուտներու դիմաց ընդունած են յատուկ ծառայութիւններու աշխատակիցներու առաջարկը՝ ի վնաս Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան:*

*Յանցագործութիւններու կատարումը հաստատուելու պարագային անոնց հեղինակները համարժէք քրէական պատասխանատուութեան ենթարկելու հարցով Դատախազութիւնը պիտի դրսեւորէ առանձնայատուկ կոշտ եւ սկզբունքային մօտեցում:*

*2020 թուականի Սեպտեմբեր 27-ին սկսած 44-օրեայ պատերազմի ընթացքին եւ անոր յաջորդող ժամանակահատուածին պետական դաւաճանութեան դէպքերով ներկայ պահին կը քննուի 10 քրէական գործ, որպէս մեղադրեալ ներգրաւուած է 43 անձ, որոնցմէ 10-ն կը գտնուի կալանքի տակ:*

# Ընդդիմադիր Պատգամաւորները Մանդատներէ Զրկելու Նախագիծը Դրուած է Շրջանառութեան Մէջ

*Ազգային Ժողովի Խորհուրդը որոշման նախագիծ դրած է շրջանառութեան մէջ, որուն համաձայն՝ կը նախատեսէն դիմել Սահմանադրական Դատարան ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւններու պատգամաւորները մանդատներէ զրկելու հարցով:*

*ԱԺ Խորհուրդի որոշման նախագիծին համաձայն՝ պատգամաւորներու ցանկին մէջ կը բացակային «Պատիւ Ունեմ» խմբակցութեան քոթայով-խորհրդարան անցած Թագուհի Թովմասեանի ու Իշխան Զաքարեանի անունները:*

*Իշխան Զաքարեանը աւելի վաղ յայտարարած էր «Պատիւ Ունեմ» խմբակցութենէն դուրս գալու մասին:*

*Ի դէպ, ցուցակին մէջ չկայ նաեւ Մարտուն Գրիգորեանի անունը, որ պատգամաւորական մանտաթ ստացած է Արթուր Վանեցեանի՝ հրաժարական տալէն յետոյ՝ Յունիս 30-ին: Գրիգորեան ընդգրկուած է «Պատիւ Ունեմ» խմբակցութեան կազմին մէջ:*

## ԼՈՒՐԵՐ

# Փաշինեան Ընդունած Է Ռուանտայի Արտաքին Գործերու Նախարարը



Վարչապետ Փաշինեանի հանդիպումը Ռուանտայի արտաքին գործերու նախարար Վինսենթ Պիրութանի հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Ռուանտայի Հանրապետութեան արտաքին գործերու եւ միջազգային համագործակցութեան նախարար Վինսենթ Պիրութան եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:

Վարչապետը բարձր գնահատած է Հայաստան-Ռուանտա համագործակցութիւնը Ֆրանքոֆոնի Միջազգային Կազմակերպութեան շրջանակին մէջ եւ ակնկալիք յայտնած է, որ այն կը խթանէ նաեւ երկկողմ յարաբերութիւններու զարգացումը: Նիկոլ Փաշինեան ջերմութեամբ յիշած է Ռուանտայի Նախագահ Փօլ Գակամէի հետ շփումները՝ վերջինիս Հայաստան այցի, ինչպէս նաեւ Տաւոսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակին մէջ եւ վերահաստատած գործընկերութիւնը խորացելու պատրաստակամութիւնը:

Վինսենթ Պիրութան շնորհակալութիւն յայտնած է հիւրընկալութեան համար եւ վարչապետ Փաշինեանին փոխանցած է Ռուանտայի Նախագահին ջերմ ողջոյններն ու բարեմաղթանքները: Ան արդիւնաւէտ գնահատած է ՀՀ Արտաքին Գործերու Նախարարութեան գործընկերներուն հետ քննարկումները եւ նշած, որ Ռուանտան հետաքրքրուած է Հայաստանի հետ համագործակցութեամբ՝ ինչպէս երկկողմ, այնպէս ալ բազմակողմ ձեւաչափերով:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են Ֆրանքոֆոնի Միջազգային Կազմակերպութեան շրջանակին մէջ փոխգործակցութեան օրակարգին շուրջ, անդրադարձած երկկողմ առեւտրատնտեսական կապերու զարգացման հեռանկարներուն: Այս առումով հետաքրքրական համարուած է զբօսաշրջութեան ոլորտը:

Վարչապետը խնդրած է իր ողջոյնները փոխանցել Ռուանտայի Նախագահ Փօլ Գակամէին:

# Փաշինեան Եւ «Ռոսաթոմ»-ի Գլխաւոր Տնօրէնը Քննարկած Են Հայաստանի Մէջ Նոր Աթոմակայանի Կառուցման Հնարաւորութիւնները



«Ռոսաթոմ» ընկերակցութեան գլխաւոր տնօրէն Ալեքսէյ Լիխաչովը

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է «Ռոսաթոմ» ընկերակցութեան գլխաւոր տնօրէն Ալեքսէյ Լիխաչովը:

Նիկոլ Փաշինեան նշած է, որ ուժանիւթի ոլորտին մէջ հայ-ռուսական համագործակցութիւնը ունի հարուստ օրակարգ, իսկ «Ռոսաթոմ»-ը ատոմային ուժանիւթի բնագաւառին մէջ ՀՀ կառավարութեան հիմնական գործընկերն է:

Գործադիրի ղեկավարը բարձր գնահատած է ընկերակցութեան դերը ատոմակայանի երկրորդ պլոքի շահագործման ժամկէտի երկարաձգման գործին մէջ եւ վստահութիւն յայտնած է, որ փոխգործակցութիւնը յառաջիկային եւս արդիւնաւէտ պիտի ըլլայ:

Ալեքսէյ Լիխաչովը շնորհակալութիւն յայտնած է սերտ համագործակցութեան համար եւ նշած, որ «Ռոսաթոմ» ընկերակցութիւնը շահագրգիռ է յառաջիկայ տարիներուն եւս արդիւնաւէտ համագործակցելու ՀՀ կառավարութեան հետ:

Հանդիպման ընթացքին զրուցակիցները քննարկած են ատոմակայանի երկրորդ պլոքի հետագայ շահագործման, Հայաստանի մէջ նոր ատոմային ելեկտրակայանի կառուցման հնարաւորութիւններուն, ատոմային ուժանիւթի զարգացման, ինչպէս նաեւ վերականգնուող ուժանիւթի բնագաւառին մէջ համագործակցութեան վերաբերող հարցեր:

# Ապաշրջափակման Գործընթացը Պէտք Է Ընթանայ՝ Յարգելով Պետութիւններու Տարածքային Ամբողջականութիւնը. Ալի Շամխանի



Իրանի Ազգային Անվտանգութեան Գերագոյն Խորհուրդի քարտուղար Ալի Շամխանի

Հաղորդակցական ուղիներու վերագործարկման շուրջ հայ-ատրպէյճանական եւ սահմանի վերաբացման վերաբերեալ հայ-թրքական սպասուող պայմանաւորուածութիւններու լոյսին տակ՝ Իրանը, վերստին, բարձր մակարդակով կը յայտարարէ՝ դէմ է Հարաւային Կովկասի մէջ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխութեան, իսկ ապաշրջափակման գործընթացը պէտք է ընթանայ՝ յարգելով պետութիւններու տարածքային ամբողջականութիւնը:

Երեւանի մէջ այս ուղերձները հնչեցուց Իրանի Ազգային Անվտանգութեան Գերագոյն Խորհուրդի քարտուղար Ալի Շամխանին՝ միեւնոյն ժամանակ, ըստ իրանեան լրատուամիջոցներու, յայտարարելով, որ Թեհրանը պատրաստ է օգտագործելու իր բոլոր հնարաւորութիւնները՝ աջակցելու Հարաւային Կովկասի մէջ երկարատեւ խաղաղութեան:

Շամխանին ընդունած էին վարչապետ Նիկոլ Փաշինեանը, Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը: Վերջինիս հետ հանդիպման ընթացքին, ըստ հայկական կողմին, «հայ-իրանեան տնտեսական յարաբերութիւններու եւ յատկապէս Սիւնիքի զարգացման ծիրին մէջ առանձնակի շեշտուած է Իրանի Ջապահար նաւահանգիստի կարեւորութիւնը, բարձր գնահատուած կողմերուն պատրաստակամութիւնը՝ շարունակել համագործակցութիւնը Մեղրիի ազատ տնտեսական գօտիի եւ Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցքի ծիրին մէջ»:

Թեհրանի մէջ լոյս տեսնող «Արաքս» պարբերականի գլխաւոր խմբագիր Մովսէս Քէշիշեան «Ազատութեան» փոխանցեց՝ 44-օրեայ պատերազմէն յետոյ եւ, այսպէս կոչուած, «Զանգեզուրի միջանցք»ի մասին չդադրող յայտարարութիւններու լոյսին տակ Իրանը՝ Ռուսիոյ, Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Հայաստանի հետ շփումներուն մէջ բազմիցս ընդգծած է տարածաշրջանային երկիրներու սահմաններուի անխախտելիութեան պահպանումը՝ զայն իր համար բնորոշելով որպէս «կարմիր գիծ»:

«Իրան կը մտահոգուէր անցուդարձերէն, մանաւանդ վերջին շրջանին ռուսական յայտարարութիւնը, որ եղաւ՝ Լաւրովի յայտարարութիւնը այն մասին, որ արդէն Մինսքի խումբ գոյութիւն չունի եւ ամէն ինչ ինք պէտք է ընէ եւ ատրպէյճանցիք անընդհատ, ժամանակ առ ժամանակ, փոքր եւ մեծ գործողութիւններու կը դիմեն սահմանին եւ դաւադրական քայլերու կը դիմեն, ինչ որ Իրանի համար մտահոգիչ է, եւ Շամխանիի ներկայութիւնը այս մտահոգութիւններուն պատասխան տալու հարց է: Իրանը ուղղակիօրէն պատգամ կը յղէ այսպիսով ե՛ւ ատրպէյճանական, ե՛ւ թրքական եւ՛ նաեւ միւս կողմերուն, որ պէտք է գգաստանալ եւ որ Իրանը փոփոխութիւն չ՛ընդունիր, Շամխանին շատ յստակ ըսած է, որ սահմաններու փոփոխութիւն Իրանը պիտի չընդունի», ըսաւ Մովսէս Քէշիշեանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հեռախօսազրոյցներու ընթացքին՝ այս Յունուարին ու Յունիսին Իրանի Նախագահ Իպրահիմ Ռայիսին շեշտած էր տարածաշրջանին մէջ միջազգային սահմաններու պահպանման կարեւորութիւնը:

# Հայկական Կողմի Պատասխան Գործողութիւններով Ատրպէյճանական Կրակը Լռեցուած Է

Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը հերթական անգամ ապատեղեկատուութիւն տարածած է, յայտարարելով, թէ իբր Յուլիս 11-ի երեկոյեան ՀՀ Զինուած Ուժերու ստորաբաժանումները կրակ բացած են հայ-ատրպէյճանական սահմանի արեւելեան հատուածին մէջ տեղակայուած ատրպէյճանական դիրքերուն ուղղութեամբ:

Աւելին՝ նոյն ժամանակահատուածին ատրպէյճանական Զինուած Ուժերու ստորաբաժանումները տարբեր, այդ շարքին նաեւ մեծ տրամաչափի հրաձգային զինատեսակներէ կրակ բացած են հայ-ատրպէյճանական սահմանի արեւմտեան հատուածին մէջ տեղակայուած հայկական մարտական դիրքերու ուղղութեամբ: Հայկական կողմի պատասխան գործողութիւններով ատրպէյճանական ստորաբաժանումներու կրակը լռեցուած է, տեղեկացուած են ՀՀ Պաշտպանութեահն Նախարարութենէն:

## ԿԳՄՍ-ն Կը Պահանջէ Դադրեցնել Հատիս Լերան Տարածքին «Յիսուս Քրիստոս»ի Արձանի Տեղադրման Գործունէութիւնը



Հատիս Լերան Տարածքը, ուր կը նախատեսուի զետեղել «Յիսուս Քրիստոս»-ի Արձանը

*Մշակոյթի Նախարարութիւնը ընդունելի համարելով «Յիսուս Քրիստոս»ի արձանին գաղափարը, միեւնոյն ժամանակ կը պահանջէ դադրեցնել որեւէ գործունէութիւն հնավայր-ամրոցի տարածքին մէջ՝ մինչ սահմանուած կարգով նախագիծի ներկայացումը եւ մասնագիտական ուսումնասիրութիւնը:*

*Նշելով, որ թէեւ «Գագիկ Ծառուկեան» հիմնադրամէն ստացած են արձանի տեղադրման վերաբերող գրութիւնը եւ պատասխանած, որ «□ քանդակ-համալիրի տեղադիրքը որոշելիս անհրաժեշտ է հաշուի առնել օրէնքը եւ բացառել պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների կամ դրանց պահպանական գօտիների տարածքներում այն տեղադրելուց», Նախարարութիւնը կը շեշտէ՝ այդուամենայնիւ հիմնադրամէն նախագիծ չէ ներկայացուած:*

*Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մամրնակրթութեան Նախարարութիւնը կը տեղեկացնէ նաեւ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարաններու եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» պետական ոչ-առեւտրական կազմակերպութեան մարզային աշխատակիցները ահազանգած են, որ դէպի Հատիս լերան գագաթ կ'իրականացուին ճանապարհի ուղղման եւ լայնացման աշխատանքներ:*

*Նախարարութիւնը կը յիշեցնէ, որ Հատիս լերան փէշերուն ընդհանուր առմամբ առկայ են պատմութեան եւ մշակոյթի՝ պետական ցուցակին մէջ արձանագրուած շուրջ 20՝ տարբեր դարաշրջաններով թուագրուող յուշարձաններ, իսկ 2019-ին հայ-իտալական հնագիտական արշաւախումբի ուսումնասիրութիւններուն շնորհիւ Հատիս լերան գագաթին նախնական տուեալներով առկայ է պրոնզ-երկաթեդարեան հնավայր-ամրոց, իսկ համաձայն օրէնքի, այն կը ստանայ նորայայտ յուշարձանի կարգավիճակ եւ կը պահպանուի մինչեւ յուշարձաններու պետական ցուցակին մէջ ընդգրկուիլը՝օրէնսդրութեամբ սահմանուած կարգով:*

*«Գտածոները ոչնչացնող կամ իւրացնող անձը պատասխանատուութիւն է կրում Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ սահմանուած կարգով», ըսուած է Նախարարութեան պարզաբանման մէջ:*

## Հայոց Ցեղասպանութեան Թանգարանին Մէջ Տեղի Կ'ունենայ Ամերիկացի Ուսուցիչներու Վերապատրաստում




*Ամերիկեան «Genocide Education Project» կազմակերպութիւնը Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-հիմնարկին հետ համագործակցելով կը կազմակերպէ ամերիկացի ուսուցիչներու վերապատրաստման ծրագիր:*

*Դասընթացքը, որ տեղի կ'ունենայ Յուլիս 10-15 Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-հիմնարկի գիտաժողովներու սրահին մէջ դասախօսութիւն-գործնական պարապմունք ձեւաչափով, մասնակիցներուն պիտի ներկայացնէ Հայոց Ցեղասպանութեան պատմական, իրաւական, ընկերա-հոգեբանական դիտանկիւնները, միաժամանակ ցոյց տալով այդ յանցագործութեան, անոր անպատժելիութեան ունեցած երկարաժամկէտ ազդեցութիւնը Հայաստանի Հանրապետութեան ներկայիս քաղաքական, տնտեսական իրադրութեան վրայ: Առանձին դասաժամ յատկացուած է Արցախեան հիմնահարցին: Ծրագիրը կը ներառէ յատուկ մշակութային մաս, որը պիտի նպաստէ ուսուցիչներու շրջանակին մէջ հայերու, հայոց պատմութեան եւ Հայաստանի վերաբերեալ ընդհանուր ճանաչողութեան բարձրացման:*

*«Այս տարի ծրագրին պիտի մասնակցին 15 ուսուցիչներ՝ ԱՄՆ 15 տարբեր նահանգներէ: Անոնց մեծ մասը ունի մարդասիրական ոլորտին մէջ դասաւանդելու 20 եւ աւելի տարիներու փորձ, ոմանք խմբագրած կամ մասնակցած են ցեղասպանութեան մասին ժողովածուներու հրատարակման, տարբեր թանգարաններու կրթական ծրագրերու մշակման», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:*

*Ծրագրին շնորհիւ մասնակիցները, ծանօթանալով Հայոց Ցեղասպանութեան թեմայի դասաւանդման մեթոտներուն, շեշտադրումներուն, GenEd կազմակերպութեան աջակցութեամբ պիտի կազմակերպեն վերապատրաստման նման ծրագրեր եւ գործնական պարապմունքներ իրենց նահանգներուն մէջ:*

## Փաշինեան-Էրտողան Հեռախօսազրոյց



Ազգային Ժողովի փոխխօսնակ Ռուբէն Ռուբինեան

Շարունակուած էջ 1-էն

*են, բայց այսպիսի բարդ գործընթացներում ամենակարեւոր բաներից մէկը առաջին պայմանաւորուածութիւններն արագ իրագործելն է: Եթէ դրանք արագ իրագործւում են, դա մեծապէս օգնում է վստահութեան ամրապնդմանը, եթէ չեն իրագործւում, հակառակը՝ շատ խաթարում է այդ վստահութիւնը: Եւ ես յոյս ունեմ, որ շատ արագ այդ պայմանաւորուածութիւնները կ'իրագործուեն», նշեց Ազգային Ժողովի փոխխօսնակը:*

*Էրտողանն ու Փաշինեանը հեռախօսազրոյցին մէջ ակնկալիք յայտնած են, որ այս պայմանաւորուածութիւնները շուտ կ'իրագործուին: Հայաստանի եւ Թուրքիոյ ղեկավարներու՝ աւելի քան մէկ տասնամեակի դադարէն յետոյ հեռախօսազրոյցին մէջ, ըստ պաշտօնական հաղորդագրութիւններու, ընդգծուած է յարաբերութիւններու կարգաւորման կարեւորութիւնը, ինչ որ պիտի նպաստէ նաեւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման: Ռուբէն Ռուբինեանի խօսքով՝ հեռախօսազրոյցը կայացած է առանց այլ երկիրներու միջնորդութեան, Փաշինեան-Էրտողան հանդիպման պայմանաւորուածութիւն չկայ:*

*Սահմանը բանալու եւ օդային բեռնափոխադրումներ սկսելու տեխնիկական մանրամասները Հայաստանը դեռ չի հրապարակեր, թէ սահմանի ո՞ր հատուածը պիտի գործէ, արդեօ՞ք ռուսերը պիտի հսկեն գործընթացը: Ռուբինեան տրամաբանական կը համարէ գործի սովորական սահմանային կարգ՝ անձնագրային անցակէտով, մաքսային վարչարարութեամբ. «Բոլոր տեխնիկական մանրամասները պէտք է քննարկուեն երկու երկրների գերատեսչութիւնների հմապատասխան ներկայացուցիչների կողմից եւ միջեւ»:*

*«Հայաստանը պատրաստ է հէնց վաղը ունենալ բաց սահմաններ Թուրքիայի հետ եւ ունենալ դիւանագիտական յարաբերութիւններ Թուրքիայի հետ, հէնց վաղը: Եթէ դա տեղի չի ունենում վաղը, եւ եթէ Հայաստանը պատրաստ է դրան, դա նշանակում է, որ դրա իրագործումը կախուած է Թուրքիայի քաղաքական կամքից այս պահին, որովհետեւ Հայաստանն ակնյայտօրէն այդ քաղաքական կամքն ունի»:*

*«Ազատութեան» հարցին՝ Թուրքիոյ քաղաքական կամքը չկա՞յ, արձագանգեց. «Յամենայն դէպս, չկան նախանշաններ պնդելու, որ այսօր երեկոյեան սահմանը բացուելու է»:*

*Վկայակոչելով թրքական դիւանագիտական աղբիւրները՝ ռուսական պետական «Ռիայ Նովոսթի» գործակալութիւնը գրած է, որ Թուրքիան Հայաստանի պատասխանին կը սպասէ՝ յատուկ ներկայացուցիչներու յաջորդ հանդիպումը Երեւանի կամ Անգարայի մէջ կայացնելու վերաբերեալ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Նուպար Աֆէեանին Շնորհուեցաւ ԵՊՀ Պատուաւոր Դոկտորի Կոչում




Հայազգի անուանի գիտնական, գործարար, բարերար Նուպար Աֆէեանին շնորհուեցաւ ԵՊՀ պատուաւոր դոկտորի կոչում:

Հանդիսաւոր միջոցառումը տեղի ունեցաւ ԵՊՀ «ISTC» կեդրոնին մէջ, Յուլիս 7-ին:

Երեւանի պետական համալսարանի տնօրէն Յովհաննէս Յովհաննիսեանը շեշտեց, որ Աֆէեանի կենսագրութիւնն ու գործունէութիւնը հայրենասիրութեան, պատասխանատուութեան, արհեստավարժութեան, փորձի նկատմամբ ունեցած մեծ նուիրումի, սիրոյ, ազնիւ ձգտումներու եւ մարդկային բարձր որակներու վառ օրինակ է:

«Վերջին շրջանում մենք ականատես ենք լինում մեծ տեղաշարժերի գիտութեան բնագաւառում, եւ այս առումով բաւականին մեծ էին նախորդ տարի կառավարութեան ջանքերը, ինչի շնորհիւ 83 տոկոսով աւելացուեց գիտութեան ֆինանսաւորումը: Կարծում ենք, որ այս քայլը դրական կ՚անդրադառնայ երիտասարդներին գիտութեան մէջ ներգրաւելու գործի վրայ: Պարոն Աֆէեանի ջանքերն, ուղղուած երիտասարդներին գիտութեան մէջ պահելուն, անգնահատելի եւ ողջունելի են: Մեծ ուրախութեամբ պատրաստ ենք տարբեր հարցերում համագործակցութեան՝ ի շահ ԵՊՀ-ի, ի շահ ուսանողութեան, ի շահ փրոֆեսորա-դասախօսական կազմի», նշեց Յովհաննիսեան:

Նուպար Աֆէեան ընդգծեց, որ ուրախ եւ հպարտ է Երեւանի ամենահզօր համալսարանի՝ ԵՊՀ-ի պատուաւոր դոկտորի կոչման արժանանալու համար:

«Ինձի համար պարտաւորեցնող է այս կոչումը: Հայաստանի մէջ կապերս քիչ են, ուրախ եմ, որ ներկայ եղայ եւ լիայոյս եմ՝ ապագային կրնանք կապեր ստեղծել համալսարանին հետ», ըսաւ Նուպար Աֆէեանը:

Միջոցառման ընթացքին Աֆէեան հանդէս եկաւ ելոյթով, ինչպէս նաեւ կազմակերպուեցաւ անոր հետ հարցուպատասխան:

## Ամերիկեան Մեծ Align Technology Ընկերութիւնը Երեւանի Մէջ Գրասենեակ Բացած Է

Ատամնաուղղութեան մէջ օգտագործուող թուային 3D սքաններներու եւ թափանցիկ Invisalign հարթեցնող սարքերոդ արտադրութեամբ զբաղող ամերիկեան մեծ Align Technology ընկերութիւնը գրասենեակ բացած է Երեւանի մէջ:




Ընկերութիւնը կը զարգացնէ բժշկական արհեստագիտութիւնները՝ նորարարական լուծումներ օգտագործելով: Align Technology-ի ամբողջ համիւը կը կազմէ 19,5 միլիառ տոլար, ունի մօտ 22.500 աշխատակից աշխարհի տարբեր երկիրներու մէջ:

Ընկերութիւնը իր աշխատակիցներուն մէկ մասը Մոսկուայէն տեղափոխած է Երեւան, սակայն ընկերութեան նոր գրասենեակին մէջ կայ 32 թափուր աշխատատեղի:

## Պայտըն Ծերակոյտի Հաստատման Ներկայացուցած Է

Շարունակուած էջ 1-էն

տան մամուլի ծառայութիւնը:

Ծերակոյտի համապատասխան յանձնաժողովը պէտք է լսումներու օր նշանակէ, որուն ժամանակ Քուինը կը պատասխանէ օրէնսդիրներու հարցերուն: Անկէ որոշ ժամանակ անց Վերին Պալատին մէջ քուէարկութիւն տեղի պիտի ունենայ՝ հաստատելու անոր թեկնածութիւնը Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանի պաշտօնին:

Քրիսթինա Քուինը 2019 թուականէն Ուքրանիոյ ԱՄՆ դեսպանի պաշտօնակատարն էր: 2016 թուականէն մինչեւ 2019 թուականի Ապրիլը ան զբաղեցուցած է Փարիզի մէջ ԱՄՆ-ի փոխդեսպանի պաշտօնակատարի, դեսպանատան տնտեսական հարցերով խորհրդականի պաշտօնները:

Դիւանագիտական ծառայութեան ընթացքին տարբեր պաշտօններ զբաղեցուցած է Թայլանտի, Բրիտանիոյ, Եւրոպական Միութեան, Ռուսիոյ եւ Ֆիլիփփիններու մէջ ԱՄՆ դիւանագիտական առաքելութիւններուն մէջ: Քուինը եղած է նաեւ ԱՄՆ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի ԵՄ, Ուքրանիոյ եւ Պելառուսիոյ հարցերով տնօրէն:

## Աշխարհի Բնակչութեան Թիւը Ներկայիս

Բնակչութեան միջազգային օրուան առթիւ ՄԱԿ-ի կանխատեսումներու համաձայն, 2022-ի դրութեամբ ամբողջ աշխարհի բնակչութիւնը կը կազմէ 7 միլիառ 874 միլիոն 965 հազար: բնակչութեան ամենամեծ թիւն ունի Չինաստան, այնուհետեւ Հնդկաստան եւ Ամերիկա:

Թուրքիոյ բնակչութեան պաշտօնական թիւն է 84 միլիոն 680 հազար: Հայաստան՝ 2 միլիոն 963 հազար: Երեւան 1 միլիոն 100 հազար, Լիբանան 6 միլիոն 825 հազար (2020 թուականի տըւեալներով): Ատրպէյճան 10 միլիոն 110 հազար Վրաստան 10 միլիոն 520 հազար (2020), Ուքրանիա 44 միլիոն 130 հազար (2020): ԱՄՆ 329.5 միլիոն, Գալիֆորնիա 40 միլիոն: Ռուսիա 145 միլիոն 200 հազար (2022), իսկ տնտեսական տըւեալներու համաձայն 2023 թուականին այս թիւը պիտի հասնի շուրջ 144.70ի:

ՄԱԿ-ի կանխատեսումներով 2020-2025 թուականներուն աշխարհի մէջ կեանքի միջին տեւողութիւնը 73.2 տարեկան է, այրերու համար՝ 70.8, կիներուն՝ 75.6: Ճաբոն՝ 85-86: Ֆրանսա 83.13-85.82: Սուրիա 76.24-79.11: Հայաստան 75.55-78.90: Վրաստան 74.24-78.54, Ատրպէյճան 73.33-75.87: Եգիպտոս 72.54-74.95: Ֆիլիպին 71.66-75.92: Հնդկաստան 70.42-71.8, Թիւրքմէնիստան 68.63-72.19: Հարաւային Սուտան 58.74-60.31: Նիկերիա 55.75-56.75: չինաստան 77.47-79.73:

## Աշխարհի Հարուստները Սկսած են Դրամ Կորսնցնել

Միջազգային լրատու աղբիւրներ կը գրեն որ աշխարհի հարուստները 2022 թուականի առաջին կիսամեակին դրամական մեծ կորուստներ ունեցած են: Ամենահարուստ 500 անձերը կորսնցուցած են 1.4 թրիլիոն տոլար: Այս ցուցանիշը՝ միլիառատէրերու ունեցուածքի ամենամեծ անկումն է:

Թեսլա (Tesla) ընկերութեան սեփականատէր Իլոն Մասքի հարստութիւնը պակսած է գրեթէ 62 միլիառ տոլարով: «Ամազոն»ի հիմնադիր Ճէֆ Պեզոս կորսնցուցած է 63 միլիառ տոլար, իսկ Մեթա ընկերութաեն ղեկավար Մասք Զուքերպէրկի հարստութիւնը կիսով չափ կրճատուած է:

Արդարեւ, հակառակ հարստութեանց նուազման, ամենահարուստ անձերը կը պահպանեն իրենց դիրքերը վարկանիշային ցանկին մէջ: Մասք տակաւին ունի ամենամեծ հարստութիւնը՝ 208.5 միլիառ տոլար: Պեզոս երկրորդ դիրքի վրայ է՝ 129.6 միլիառ տոլարով: Իսկ Ֆրանսայի ամենահարուստ մարդը եւ Լուի Վիթոն խումբի նախագահ Պեռնար Առնօ 128.7 միլիառ տոլարով երրորդն է: Անոր կը յաջորդէ Մայքրոսոֆթի հիմնադիր Պիլ Կէյթս 114.8 միլիառ տոլար հարստութեամբ:

## Նոյեմբերի Ընտրութիւնները

Շարունակուած էջ 1-էն

Գոնկրէսի շէնքէն ներս ու յաջողեցան մի քանի ժամ առկախել նոր նախագահի ընտրութիւնը հաստատող սահմանադրական գործընթացը: Քաղաքական մեկնաբաններու կարծիքով, երկիրը մազապուրծ ազատած է յեղաշրջումէ մը, որ կրնար լուրջ տագնապի առջեւ դնել Ամերիկան:

*Մուրատի խումբը վերէն կը տեսնէր ամէն ինչ, բայց ողբալէ զատ ոչինչ կրնար ընել:*

*Մուրատ եւ իր քաջերը զէնքերը վար դրած չէին, նորանոր դիրքերու մէջ փոխադրուելով կը դիմադրեն յառաջացող բանակին, բայց անօգուտ: Ջլատուած էին իրենց ուժերը: Ռազմիկները ոչնչացած էին, իսկ Մուրատ իր քանի մը քաջերով քարայրներու մէջ կը շարունակէր պայքարիլ: Զէքի փաշայի բանակը կը քանդէ, կը հրդեհէ եւ մոխրակոյտի կը վերածէ Շէնիկ, Սէմալ, Ալեանցիք, Կելիէկուզան եւ այլ գիւղեր:*

*Արտաքին հայ աշխարհէն օգնութեան որեւէ յոյս չքացած էր: Թուրք եւ քիւրտ անկանոն խուժանը իրենց վայրագ կիրքերը յագեցնելու համար կը սկսին իրարու հետ մրցիլ մագլցելով Սասնոյ բարձունքը, երբ յայտնի կ՚ըլլայ որ*



Համբարձում Պօյաճեանի
(Մեծն Մուրատ)

*Սասունցին զէնքը վար դրած է:*

*Մուրատի համար անհնարին կը դառնայ կռիւը շարունակել, հետեւաբար իր փոքրացած խումբով կ՚ապաստանի մօտակայ քարայր մը: Դժբախտաբար զինուորներէն նշմարուելով կը հետապնդուի: Թուրքերը չորցած խոտերու դէզ մը կը մօտեցնեն քարայրին բերանը եւ կրակ կու տան չորս կողմէն, որուն արձակած թանձր ծուխը քարայրէն ներս հոսելով, շատ չանցած ներսինները դուրս կը նետուին: Բոլորն ալ կը ձերբակալուին:*

*Սասունի վայրագութեանց մասին Իզմիրլեան Պատրիարք Անգլիոյ եւ Ռուսիոյ դեսպաններուն բողոքած ըլլալով՝ Սուլթան Համիտ կը սարսափէր անանց միջամտութենէն: Հնչակեան Կեդրոնը Սասնոյ ջարդերու մասին օրը-օրին տեղեկութիւններ տուած էր մամուլին:*

*Մուրատ կը դատապարտուի մահուան, սակայն Եւրոպական պետութեանց միջամտութեամբ վճիռը կը փոխուի ցմահ բանտարկութեան եւ ան կը ղրկուի Աֆրիկեան Տրիպոլիս:*

### *ՄԱՅԻՍԵԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ*

*Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցող ամէն փոքր դէպք իսկ, իր լայն արձագանգը կը գտնէր եւրոպական դիւանագիտա-*

Շար.ը էջ 15

# Համալսարան, Յետոյ՝ Զինակոչիկ... (Դարձեալ Յիշողութեան Բովում)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

*Զնայած մայրիկիս ամէնօրեայ յորդորներին, որէսզի հայրիկս ինձ համար բարեխօսի քննական յանձնաժողովի՝ իրեն ծանօթ դասախօսների հետ, նա մնաց անդրդուելի:*

*-Ինքը խելահաս տղայ է, 19 տարեկան: Դեռ փոքր տարիքից ինքնուրոյն է եղել, նա որեւէ օգնութեան կարիք չունի:*

*Ես հասկանում էի, որ նա վշտացած էր իմ՝ մշտապէս ինքնագլուխ որոշումներ կայացնելու համար, մանաւանդ, իմ վերջին՝ Մոսկուա փախչելու արարքը նա երբեք չէր կարող ներել:*

*- Յակոբ ջան, եթէ նրան չ՚օգնես՝ բանակ կը տանեն, այն էլ՝ երեք տարով: Մեղք է, կը գնայ, կը կորչի,- ասում էր մայրս հարեւան սենեակում:*

*- Թող տանեն, վնաս չունի, եթէ ճիշդն ուզում ես իմանալ, ես ուզում եմ, որ նա բանակ գնայ, գուցէ թէ պղտոր մտքերը պայծառանան:*

*- Այդ ի՞նչ ես ասում այ Յակոբ, ի՞նչ է արել խեղճ տղաս, որ այդպէս չ՚արացած ես նրա նկատմամբ:*

*- Ես ու դու լաւ գիտենք, թէ ինչ է արել: Նա, ճիշդ է,, ամանակ շատ չունի, սակայն առանց օգնութեան էլ կարող է համալսարան ընդունուել:*

*...Օպերային թատրոնի արտիստներն արդէն վերադարձել էին Լենինգրադից: Ես գնացի թատրոն հարցերս լուծելու:*

*- Հենրիկ ջան, մենք արդէն արձակուրդ ենք գնում, մինչեւ Սեպտեմբեր ազատ ես,- ասաց ընկեր Զորիկը,- քեզ յաջողութիւն եմ մաղթում: Համալսարան ընդունուես կամ ոչ, միեւնոյնն է, դու միշտ կարող ես գալ թատրոն ու մասնակից լինել ներկայացումներին:*

*Ուրեմն ինձ ոչինչ չէր խանգարում արաել համալսարան ընդունուելու համար: Միակ խոչընդոտը Պուշկինի այգին էր, ուր հաւաքւում էին ընկերներս, որոնք արդէն մէկ-երկու տարուայ ուսանողներ էին: Այժմ էլ իրենց արձակուրդի օրերն էին անցկացնում «մեր» այգում: Միակ «անուսը» ես էի մեր խմբում: Բնականաբար, նրանց խօսակցութիւնների հիմնական նիւթը տուում էր իմ անձի շուրջ: Ամառուայ այդ շոգին նստել տանը եւ արաե՞լ,- ինչ է թէ համալսարան ես ընդունուելու: Ուրեմն՝ գրքերդ դիր թեւիդ տակ ու գնայ այգի, մանաւանդ Լիլիթն է այնտեղ:*

*Մինչեւ կէսօր մենակ էի լինում այգում, տղաները յայտնւում էին աւելի ուշ: Նրանց գալուց յետոյ՝ ի՞նչ արաել..., մէջտեղ էր գալիս շախմատն ու թղթախաղը: Եւ որէսզի թղթախաղը էլ աւելի աշխոյժ ընթանայ, որոշում էինք մանր դրամներով խաղալ:*

*Եղաւ այնէս, որ, մի երեկոյ, երբ մէջտեղում ահագին դրամ էր հաւաքուել, որտեղից որտեղ յայտնուեցին երկու ոստիկան:*

*- Էդէս, հա՜, ղումար էք խաղում,- ասաց նրանցից մէկը:*

*- Զէ՜, ի՞նչ ղումար..., ի՞նչ էք ասում,- ասաց Ժիրիկը:*

*- Բա էս փողերն ի՞նչ են տղայ ջան:*

*- Դէ՜..., ժամանակ ենք անցկացնում էլի՜:*

*- Ժամանակ էք անցակացնում հա՜, հիմա ձեզ կը տանենք Միլիցիա (ոստիկանատուն), էնտեղ լա՜ւ ժամանակ կ՚անցկացնէք,- ստարշինա (աւագ ոստիկան) էդ փողերը հաւաքի,- դիմեց կողքին կանգնած ոստիկանին:*

*Բոլորս լուռ, գլխահակ սասում ենք այդ «ներկայացման» աւարտին: Վերջապէս համարձակութիւն ունեցայ ասել.*

*- Ընկեր լետենանտ, խնդրում ենք ներել մեզ, էլ նման բան չի կրկնուի: Ընկերներս խայտառակ կը լինեն, նրանք ուսանողներ են: Վաղը ամբողջ քաղաքը կ՚իմանայ: Թէ տանում էք՝ ինձ տարէք, ես եմ մեղաւորը:*

*- Պա՜հ, ահ, ա՜հ,- հըլա սրան մտիկ արէք: Ընկերներիդ թասիբին ես կանգնում հա՜..., բա դո՞ւ ինչ ես անում:*

*- Ես..., ես..., դէ ես էլ արաում եմ, որ համալսարան ընդունուեմ,- կմկմացի ես:*

*- Լաւ էլ արաում ես..., քեզնից լաւ ղումարբազ դուրս կը գայ..., իսկ հիմա ինձ լսէք, տեսնում եմ, որ խելօք տղաներ էք: Այս անգամ ներում եմ ձեզ: Յաջորդ անգամ եթէ նման բան տեսնեմ՝ էլ աջ ու ձախ չի լինի՝ ուղիղ ոստիկանատուն: Իսկ հիմա չքուէք էստեղից, արա՛գ:*

*Հետագայում արդէն մտերմացել էինք ծանօթ ոստիկանների հետ ու ամբողջովին մոռացութեան տուել թղթախաղը:*

*Հաշուած օրեր էին մնացել մինչեւ ընդունելութեան քննութիւնների սկսելը: Վերջին երկու շաբաթը տանն էի արաում:*

*- Լաւ է, լաւ Հենրիկ,- խրախուսում էր Լիլիթը, դու կը յանձնես քննութիւնները:*

*- Շատ յոյս չունեմ Լիլիթ, բազմաթիւ դիմորդներ կան բանասիրական բանում, մէկ տեղի համար՝գրեթէ տաս դիմորդ: Ծանօթների տեղերն էլ եթէ հաշուելու լինենք՝ տակը բան չի մնայ:*

*Ի վերջոյ պիտի գար քննութիւնների առաջին օրը: Առաջին քննութիւնը մասնագիտու-թիւնից էր: Գնահատականս՝ գերազանց, մնացած առարկաների գնահատականները միջակ ու դրանից քիչ բարձր: Մասնագիտականը գերազանց լինելու պատճառով ես ընդունւում էի Պայմանականի սկզբունքով: Այսինքն մինչեւ Յունուար սովորելու էի միւս ուսանողների նման, սակայն առանց կրթաթոշակի: Կիսամեակին քննութիւնները յաջող յանձնելու դէքում նոր միայն համարւում էի հիմնական ուսանող:*

*Եկաւ Սեպտեմբերը եւ դասերն սկսուեցին: Միեւնոյն ժամանակ, հաշուառման համար մի քանի անգամ կանչել էին Արաբկիրի Զինկոմիսարիատի ղորակոչիկների բանից: Ես արդէն տասնըիննը տարեկան էի եւ ենթակայ՝ բանակ զօրակոչուելու:*

*Պարզուեց, որ Պայմանական կարգավիճակով սովորող ուսանողը չի ազատւում բանակում ծառայելուց: Ես, կամայ թէ ակամայ արտաւորուած էի բանակ գնալ երեք տարուայ ծառայութեան համար:*

*Ես համոզուած էի, որ Յունուարից յետոյ կը դառնայի հիմնական ուսանող ու, ընդհանրապէս կ՚ազատուէի զինուորական ծառայութիւնից: Ըստ օրինի ինձ կարող էին զօրակոչի ենթարկել երկրորդ զօրակոչի ժամանակ, այսինքն գալիք տարուայ գարնանը: Սակայն Զինկոմիսարիատի զօրակոչիկների բանի ետ ընկեր Ալոյեանը լսել անգամ չ՚ուզեց այդ մասին: Նա վրէժ ունէր լուծելիք ինձնից: Ահա թէ ինչու:*

*Կոպիտ, անտաշ ու վայրենի այդ մարդը մի «մեծ առաւելութիւն» ունէր միւսների համեմատ: Նրա ամէն մի խօսքին ու արտայայտութեանը յաջորդում էր, արդէն նրա համար բերնի մաստակ դարձած որեւէ «շքեղ» հայհոյանք: Նա ինձ տանել չէր կարողա-նում, ամբողջ հոգով ատում էր ինձ, որովհետեւ հայհոյանքով էի ատասխանել ինձ ուղղուած՝ նրա հայհոյանքին:*

*Յայտնի դարձաւ, որ այն խումբը, որի մէջ ես էի ընդգրկուած, զօրակոչուելու էր Նոյեմբեր 22-ին: Մինչ այդ, Ալոյեանը «դաստիարակչական» աշխատանք էր տանում մեզ հետ:*

*Մի օր, Զինկոմիսարիատի բակում շարքի էինք կանգնած՝ զինուորական քայլքին (քայլաձեւ) ծանօթանալու համար: Բացայայտ կերով ցուցամատը դէի ինձ ուղղած բղաւեց.*

*- Է՜յ դու, դու,- մինչ ես փորձում էի չհասկանալ ձեւացնել, որ խօսքը իմ մաին է, նա շարունակեց,- հա՜, հա՜,դու՝ Ախարի լակոտ, ուղիղ կանգնիր:*

*Ես ոչինչ չատասխանեցի ու դիրքս չփոխեցի:*

*Տեսնելով, որ ես ոչ մի շարում չեմ անում, սադայէլական խոր դէմքին, Ալոյեանը մօտեցաւ ինձ, աչքերն ուղղած իմ աչքերին, ոտքով հարուածեց՝ իբր թէ ծուռ դրած ոտքիս: Հարուածից յետոյ, ես դարձեալ ոտքս դրի նախորդ դիրքի մէջ*

*Սադիստը էլ աւելի ուեղ հարուածեց: Մէկ անգամ էլ կրկնուեց «մենամարտը»: Տեսնելով ոտքիս ահաւոր ցաւից ջղաձգուած դէմքս, Ալոյեանը ռուսերէն՝ է՜ն յայտնի, իւրաքանչիւր ռուս մարդու բերանում օրը մի քանի անգամ արտաբերուող հայհոյանքը բարձրաձայն շրտեց դէմքիս, ու «Սուկին սին» (Բ.ի տղայ) ասելուց յետոյ ուզում էր ինչ որ հրահանգ տալ ոտքի վրայ քարացած տղաներին, ցաւից ոռնալով, ի ցոյց աշխարհի բղաւեցի՝*

*- Էտօ տի Սուկին սին (Այդ դու ես Բ.ի տղան):*

*Եկաւ Խորհրդային բանակ գնալու օրը՝ Նոյեմբերի 22-ը: Ընտանիքիս անդամներն ու ընկերներս եկել էին ինձ ճանապարհելու: Երեւանի երկաթուղային կայարանում ասեղ գցելու տեղ չկար:*

*Ո՞ւր են տանելու,- ոչ ոք չգիտէր: Ալոյեանը վազում էր աջ ու ձախ, վագոնից-վագոն Հայրիկս փորձում էր մէկ վայրկեան կանգնեցնել նրան ու հարցնել, թէ ո՞ւր են տանելու իր որդուն: Վերջապէս հայրիկիս յաջողուեց կանգնեցնել նրան ու հարցնել.*

*- Ո՞ւր էք տանելու տղաներին, ո՞ր քաղաքում են ծառայելու:*

*- Իսկ ո՞վ է ձեր տղան,- նրա հայեացքից դուար չէր կռահել, որ նա գիտէր, որ հայրիկս էր հարցը տուողը, որովհետեւ ես կանգնած էի նրա կողքին:*

*- Հենրիկն է, ահա նա,- ձեռքը դնելով ուսիս,- ասաց հայրիկս:*

*- Ը՜մ..., ձեր տղան է հա՞..., լաւ տղայ է, խօսք չկայ, չեմ կարող ասել թէ ուր ենք տանելու, բայց կարող եմ ասել հետեւեալը: Ես նրան այնիսի տեղ եմ ուղարկում, որ այլեւս չկարողանայ ետ գալ:*

*- Այդ ինչէ՞ս..., ի՞նչ մեղք է գործել տղաս, որ նման դաժան վերաբերմունք էք ցուցաբերում նրա նկատմամբ:*

*- Հենց այդէս Պարոն Անասեան,- շեշտելով ՊԱՐՈՆ-ը ասաց նա ու շարունակեց,- ուղարկելու եմ սիտակ արջերի մօտ: Հիմա հասկացա՞ք, թէ ինչո՞ւ՝ձեր տղային հարցրէք:*

*- Մի րոպէ, մի րոպէ ընկեր Ալոյեան, ինչ ասացի՞ք..., այնիսի տեղ որտեղից չկարողանամ վերադառնա՞լ, այո՞, խօսակցութեան մէջ մտայ ես:*

*- Այո՛, այո՛, ճիշդ ես լսել:*

*- Դէ հիմա, դուք ինձ լսէք ՊԱՐՈՆ Ալոյեան, դուք էլ էք մի օր Պարոն դառնալու, վստահ եղէք, գալու է այդ օրը, դուք, կամ ես երբեք ընկերներ չենք դառնալ,- չթաքցնելով ատելութիւնս իր նկատմամբ՝ շարունակեցի,- լաւ յիշէք այս օրը՝ Նոյեմբեր 22: Արիլի 10-ը իմ ծննդեան օրն է, մինչեւ այդ թուականը գրեթէ հինգ ամիս կայ: Ես իմ ծննդեան օրը Երեւանում եմ լինելու:*

*- Դա մենք դեռ կը տեսնենք երիտասարդ, դու արդեօք կը կարողանա՞ս ողջ առողջ վերադառնալ սիտակ արջերի մօտից: Իսկ հիմա գնայ քո վագոնը:*

*- Պաա..., հոգ մի անի, մենք հին «բարեկամներ+ ենք, իսկ ինչ որ իրեն ասացի՝ ճիշդ է, չորս-հինգ ամիս յետոյ ես այստեղ կը լինեմ, հաւատայ հայրի՜կ...*

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

# Պատկառելի 190ամեակ Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոց

## 190ամեակի Վերանորոգութիւնները Ետիգուլէ, Իսթանպուլ Հիմնադրուած 1832 Թուին

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ



### Ազգապարծան Հիւանդանոցը

Վերջերս կարդացինք կ. Պոլսոյ Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցի վերանորոգութեանց մասին տպաւորիչ մի քանի նկարներով հիմնադրութեան 190ամեակին: Մեզի պարտք կ'իյնայ անտես չառնել մեր ազգին ու եկեղեցիին պատիւ բերող հաստատութեանց տարեդարձներն ու մանաւանդ անցեալի ու ներկայի բարերարները որոնք հոգածու եղան այս վսեմ ու մնայուն հաստատութեան վերելքին իրենց նպաստը բերելով: Վերջին օրերս հիացումով կարդացինք Հիւանդանոցին արտաքին ու ներքին հիմնական վերանորոգութեանց մասին եւ այս յօդուածով յարմար կը տեսնենք Հիւանդանոցին պատմականն ու անմոռաց դերը հակիրճ կերպով ներկայացնելու:

Ի յիշատակ պոլսահայ մեծ բարերարներուն այսօր կը յիշատակենք Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի հիմնադրութեան 190ամեակը, որ անտարակոյս անբաղդատելի կրնայ նկատուիլ սփիւռքահայ պատմութեան մէջ, անցեալին ու ներկային, իր երկարակեցութեամբ եւ անհուն բարիքներով: Երջանկայիշատակ Բարերարնրուն ու Ամենապատիւ Պատրիարքներուն հոգիները թող լոյսերու մէջ հանգչին եւ Ազգային Հիւանդանոցի բարերար սոյն հաստատութիւնը շողայ կենարար եւ կենդանարար լոյսերով ի փառս հայ ազգին որուն անունն ու մականունը արդարօրէն ու բարձրաձայն կը կրէ իր վրայ:

### Այցելութիւն

1955 թուի ամրան, տակաւին նորընծայ հոգեւորական, այցելութեան գացի Իսթանպուլ մեծ մօրեղբօրս Մկրտիչ Դերձակեանի եւ ընտանիքին հիւրընկալութեամբ: Հինգ տարի ետք կրկին այցելեցի, եւ երկու առիթներով ալ աջը առի ծերունազարդ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքին: Մեծ մօրեղբայրս առաջնորդեց զիս թէ՛ Պատրիարքարան եւ թէ՛ Ս. Փրկիչ Ազգային Հիւադանոց, որուն յայտնի բարերարներէն մին եղած է նաեւ ինք: Հիացումի առիթ ընծայած էր ինծի Ազգային Հիւանդանոցին ընդարձակ համալիրը, եւ որպէս այցելու իմ տպաւորութիւնները արձանագրած եմ այցելուներու մատեանին մէջ երկիցս՝ 1955ին եւ 1960ին:

### Հիւանդանոցին Կառուցումը

Թուրքիոյ հայութեան արդար հպարտութեան արժանի եղած է միշտ Ետիգուլէի Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը իր տիպար անունով եւ ազգանունով, որ հիմնադրուած է 1832 թուին բարերար Գազազ Յարութիւն Ամիրա Պէզճեանի կողմէ: Այս տարի Հիւանդանոցը 190 տարիքը կը բոլորէ ըլլալով արժանի, աշխոյժ, եւ օրինակելի գործունէութեամբ ազնուագոյն ծառայութեամբ յայտնի յուշակոթող մը թրքահայ համայնքին եւ զայն հովանաւորող Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան, որոնց շարունակական խնամքին յանձնուած պատկառելի հաստատութիւն մը եղաւ: Հայրենիքէն դուրս դժուար թէ հայկական համայնք մը կարողացած ըլլայ հասնիլ նման մարդասիրական նախաձեռնութեան: Ազգային Հիւանդանոցին համազօր կը կանգնի այսօր հարաւային Գալիֆորնիոյ Արարատ Տարեցներու Տունն ու հիւանդներու բաժինը ուր կան այժմէական մասնագիտական բոլոր հոգատարութիւնները երկու թեւերու վրայ սփռուած, տարեցներու եւ հիւանդներու յատուկ: Այս հաստատութիւնը եւս օժտուած է մատուռով մը ուր ստէպ Ս. Պատարագ եւ ժամապաշտութիւն կը կատարուի շրջանի հայ եկեղեցական թեմերէն անխտիր:

Տարիներու ընթացքին, ինչպէս նուիրատուութեանց յուշատախտակներէն նկատեցի, բարերարներու շարքը անպակաս եղած է, բազմաթիւ հիւանդներու շարքին, ըլլալով նաեւ բարերար եւ մխիթարական, եւ իսկական աղբիւր անսպառ բարեաց: Իսթանպուլի եկեղեցասէր հայութիւնը, ի պատիւ իրենց, քրիստոնէական պարտք համարած է նիւթական լայն օժանդակութիւն հասցնել Ազգային Հիւանդանոցին պահել կարենալու համար զայն յաչս պետութեան եւ անոր ակնկալութեանց մինչեւ այսօր:

Ի պատիւ պոլսահայութեան հարկ է կրկին հաստատել որ հայկական գլխաւոր հիւանդանոցի մը երկար տարիներու պահպանումը որպէս կենսական հաստատութիւն իր որակաւոր բարձրութեամբ մարդասիրական պարտականութեանց գերազանց երաշխիքը կրնար տալ բոլոր գաղութին իրենց ընձեռած առատաձեռն օժանդակութեան շնորհիւ:

### Համալիրը

Իսթանպուլի Ետիգուլէ թաղամասի արեւմտեան կողմը, սկզբնական իր 22.000 քառակուսի մեթր տարածութեան մը վրայ լայնատարած կանգնած է Ս. Փրկիչ հիւանդանոցը տասնեւհինգ շէնքերով եւ օրհնաբեր մատուռով մը, իր երկու գլխաւոր բաժիններով՝ Հիւանդանոցի եւ Պատսպարանի:

Հիւանդանոցի բաժինը իր կարգին ունի 20է աւելի այլազան հիւանդութեանց քննութեան յատուկ դարմանատուներ, տասը յարկաբաժիններ եւ 300-ի չափ անկողիններով: Մասնաբաժինները կը կազմեն ներքին եւ արտաքին հիւանդութեանց, ինչպէս նաեւ մանուկներու, կուրծքի եւ թոքերու հիւանդութեանց յատուկ, առաւել մտային եւ հոգեկան հիւանդութեանց, ինչպէս յաճախ կը կարդանք «Սուրբ Փրկիչ» ամսագրի համարներուն մէջ: Բոլորն ալ մասնագէտ բժիշկներու խնամքին յանձնուած:

### Օժանդակ Բաժիններ

Հիւանդանոցին յարակից կան նաեւ տասը բժշկական օժանդակ բաժիններ՝ վիրաբուժական գործողութեանց, տարրալուծարաններ, «Ք» ճառագայթի յարկաբաժին, մարմնակրթանքի բաժին եւ դեղարան: Հիւանդանոցին պատսպարանի բաժինը ունի երեք գլխաւոր մասեր՝ Ծերանոց, Հինդլեան Յարկաբաժին, Գազանճեան Հանգստարան: Ծերանոց կ'ընդունուին անոնք որոնք թաղային խորհուրդներէն, հիւանդանոցին օժանդակ մարմիններէն, եւ կամ աղքատախնամ վարչութիւններէն կը յանձնարարուին, մանրա- մասնօրէն քննութենէ անցնելէ ետք որպէս պատսպարուելու կարիքը ունեցող ծերեր եւ անօգնականներ, ու հոն կ'ապրին ցկեանս:

### Հինդլեան Յարկաբաժինը

Իրականին մէջ անկելանոց մըն է ուր կը պատսպարուին հիւանդ եւ անկար ծերեր ու անբուժելի հիւանդներ: Գազանճեան Հանգստարանին մէջ կը պատսպարուին վճարովի ծերեր, բարերարներ ու մտաւորականներ, որոնք կամ ծեր եւ կամ հիւանդ ըլլալնուն համար կ'ընդունուին:

Քառասուն տարիներ առաջ հիմնական նորոգութիւններ եւ յաւելումներ կատարուած էին իւրաքանչիւր բաժնի մէջ: Աւելի կանուխ, 1965էն սկսեալ, եւ ապա 19691973 տարիներուն շինարարական յաւելումներ կատարուած են, որոնց մէջ կարեւոր բաժին մը վերցուցած է Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկը, որուն լայն յատկացումներով հիւանդանոցը օժտուած է բազմատեսակ եւ արդիական գործիքներով, որոնք մեծապէս նպաստած են հիւանդանոցի վերելքինե, ինչպէս կը կարդանք «Շողակաթ» պարբերաթերթի 1973 թուականի համարին մէջ:

Մօտաւոր անցեալին Ս Փրկիչ Հիւանդանոցը մէկ տարուան մէջ ընդունած է ընդհանուր թիւով 110,000 հիւանդներ եւ պատսպարեալներ: Նոյն ատեն բժիշկներու թիւը անցած է 50ը, եւ մնացեալ անձնակազմը՝ ատամնաբոյժ, դեղագործ եւ գիտաշխատող՝ դարձեալ 50: Այս վերջին օրերուն ժամանակն էր վերանորոգութեանց ձեռնարկելու եւ

Շար.ը էջ 15


DETERMINED & COMPASSIONATE
CRIMINAL DEFENSE
o JUVENILE DEFENSE o DOMESTIC VIOLENCE
o ASSAULT & BATTERY CHARGES
o DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
o VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
o IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
o ROBBERY AND THEFT OFFENSES
o ASSAULT WITH A DEADLY WEAPON
o CRIMES INVOLVING POLICE OFFICERS
o CRIMINAL THREATS o WEAPON CHARGES
o DRUG OFFENSES o SEX CRIMES
o THEFT CRIMES o GANG CRIMES

ALICE TAVOUKJIAN
Attorney At Law
At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.
LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC
www.TAVOUKJIANLAW.com
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801
CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

# Բացուեցաւ AMAA-ի Ստեփանաւանի Կեդրոնի Նոր Շէնքը




ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԴՈՅԵԱՆ

Հայաստանեայց Աւետարանական եկեղեցիի (ՀԱԵ) Ստեփանաւանի համայնքի եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան (AMAA) աշխատակիցներուն համար կրկնակի տօն էր: ՀԱԵ 175-ամեակը տօնելու համար աշխարհի տարբեր ծագերէն Հայաստան ժամանած բարերարներն ու հիւրերը, ինչպէս նաեւ ՀԱԵ տարբեր համայնքներու հոգեւոր հովիւները Յուլիսի 3-ին այստեղ էին՝AMAA-Ստեփանաւանի Կեդրոնի Նոր շէնքի բացման հանդիսաւոր արարողութեան մասնակցելու համար:

Տանտէրերը հիւրերուն դիմաւորեցին աղուհացով, ապա ելոյթ ունեցաւ ԱՀԱԸ Ստեփանաւանի մասնաճիւղի պարախումբը:

Ներկաներուն ողջունեց AMAA-ի Գործադիր Տնօրէն Զաւէն Խանճեանը: Ան մասնաւորապէս ըսաւ.

«Տալը սիրոյ նշան է, կամաւոր կերպով, սիրով տալը, որու վարձատրութիւնը ուրախութիւն է, երջանկութիւն: Տալը պէտք է ըլլայ լուռ, առանց թմբուկի՝ Աստուած օրհներգելով, Աստուա՛ծ փառաւորելով եւ ոչ թէ մարդը: Տալու ուրախութիւնը Աստուծոյ գործի քաջալերանքն է, Աւետարանչականի միջոցով կատարուած Աստուծոյ գործը քաջալերելն է: Նուիրատուները միշտ ըսած են, որ «մեր սրտի փափաքն է Աստուած փառաւորելը»: Այս գեղեցիկ շէնքը, որ այսօր կը նուիրենք եւ կ՛անուանակոչենք, պէտք է ծառայէ մանուկներու, երիտասարդներու եւ չափահասներու: Այս գրասենեակը մանուկներուն պիտի առաջնորդէ դէպի Աստուած»:

Պարոն Խանճեանը նաեւ փոխանցեց նուիրատուին խօսքը. «Ես հպարտ եմ իմ հայկական ծագումով, իմ արմատներով եւ կը գիտակցիմ, որ իմ նախահայրերս շատ հայերու նման անցան դժուարին ճանապարհներով, եւ մենք ուրախ ենք, որ յանուն անոնց յիշատակին՝ կը կատարենք այս նուիրատուութիւնը»:

AMAA-ի Նախագահ Նազարէթ Տարագճեան իր խօսքն սկսաւ Սաղմոս 127-ով՝ «Եթէ Տէրը չշինէ տունը, զուր տեղ կ՛աշխատին անոր շինարարները»: Եւ շարունակեց. «Աստուած այս գեղեցիկ առաւօտը մեզի պարգեւեց եւ մենք առիթ ունինք երկար սպասումէ յետոյ այցելելու Ստեփանաւան ու մեր աչքերով տեսնելու այն շէնքը, որ երկար ժամանակ երազեր ու ծրագրեր էինք: Այսօր մենք կը նուիրաբերենք այս շէնքը Աստուծոյ փառքին համար եւ մեր աղօթքն է, որ այս կեդրոնը ըլլայ փարոս եւ հրաւիրէ Աստուծոյ բոլոր զաւակները, որ իրեն մօտենան, սորվին իրար սիրել, ինչպէս որ Աստուած սիրեց ամբողջ աշխարհը, մինչեւ որ իր միածին որդին տուաւ, որպէսզի ամէն ոք, որ անոր հաւատայ, չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ:

AMAA-ի կողմէ կ՛ուզեմ այսօր շնորհաւորել Ստեփանաւան քաղաքի ժողովուրդը՝ այս գեղեցիկ կառոյցին համար: Թող Աստուած այս կեդրոնը օրհնութիւն մը ընէ այս քաղաքին համար: Շնորհակալութիւն այն բոլոր նուիրատուներուն եւ ի մասնաւորի Grille Foundation-ին, որ իրենց նուէրներով կարելի ըրին այս ծրագրին յաջողութիւնը:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր անոնց, որոնք քրտնաջան աշխատեցան այս ծրագրին յաջողութեան համար, ինչպէս Հրաչ Սարգիսին, Զաւէն Խանճեանին, Յարութ Ներսէսեանին եւ Արէն Տէյիրմէնճեանին: Այսօր ուրախ օր է Ստեփանաւանի մէջ եւ կը մաղթեմ, որ ձեր բոլոր օրերը ըլլան ուրախ եւ պայծառ»:

Այնուհետեւ պարոնայք Զաւէն Խանճեանն ու Նազարէթ Տարագճեանը իրենց կողակիցներուն՝ Սոնա Խանճեանի եւ Անի Տարագճեանի հետ կտրեցին մուտքի ժապաւէնը եւ բոլորին հետ միասին շրջայց կատարեցին նոր գրասենեակի շէնքը:

Նոր գրասենեակի կառուցման հովանաւորներն են Փիթըր եւ Մոնիք Թորինգթըններն ու իրենց ընտանիքը՝ ԱՄՆ-էն: Այդ մասին վկայող ցուցանակին վրայ, որու բացումը եւս կատարուեցաւ նոյն օրը, արձանագրուած էր. «Խոնարհ երախտագիտութեամբ առ Աստուած՝ Իր անսասան սիրոյ եւ անսահման օրհնութիւններուն համար, մենք հպարտութեամբ կ՛ընդունինք մեր հայկական ժառանգութիւնը եւ այս կեդրոնը կը նուիրենք մեր նախապապերու՝ Մարտիրոս եւ Աղաւնի Նիկողոսեաններու, մեր պապերու՝ Արմենակ եւ Մաթիլտա Օհանեաններու եւ մեր ծնողներուն՝ Ժիրայր եւ Արսինէ Սուսմայաններու յիշատակին»:

Գրասենեակի շէնքի բացումէն յետոյ ՀԱԵ Ստեփանաւանի եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ ՀԱԵ 175-ամեակին նուիրուած «Ամուր պահենք մեր հաւատքը» փառաբանութեան պաշտամունք:

Անդրանիկ Մարդոյանը AMAA-ի Հայաստանի Մասնաճիւղի մամուլի բաժինի քարտուղարն է (Արեւելահայերէնէ Արեւմտահայերէնի վերածեց Յակոբ Միքայէլեան)»

# Կոմիտասի Անուան Պանթէոնին Մէջ, Բացուեցաւ Ճիւան Գասպարեանի Կիսանդրին




Ճիւան Գասպարեանի մահուան առաջին տարելիցին, Կոմիտասի անուան պանթէոնին մէջ, ուր ամփոփուած է երաժիշտին մարմինը, բացուեցաւ անոր կիսանդրին, որուն հեղինակը քանդակագործ Ալեքսան Պապայեանն է:

Ճիւան Գասպարեանի թոռը՝ տուտուկահար Ճիւան Գասպարեան կրտսերը, նուագեց կիսանդրիի բացման ընթացքին՝ այդպիսով փորձելով շնորհակալութիւն յայտնել իր մեծ հօրը, որ նաեւ իր վարպետն էր:

Ճիւան Գասպարեան կրտսերը ըսաւ, որ տուտուկահար, երաժշտահան Ճիւան Գասպարեանը տարիներ շարունակ ծիրանափողի մեղեդիները տարածած է աշխարհով մէկ՝ հանրահռչակելով տուտուկն ու հայկական երաժշտութիւնը:

«Մեծ հայրս կ՛ըսէր՝ պէտք է կա՛մ լաւը ըլլալ, կա՛մ չնուագել առհասարակ: Այդ ինծի համար մեծ պատասխանատուութիւն էր: Անոր վստահութիւնը զիս կ՛ոգեւորէր, թեւեր կու տար: Ան կ՛ըսէր, որ կարեւոր է, թէ ինչպէս մարդ կը հեռանայ կեանքէն: Ուրախ եմ, որ ան վերջին հանգրուանը գտաւ պանթէոնին մէջ: Մեծ հայրս կ՛ըսէր, որ պանթէոնին մէջ թաղուած շատ մեծերու հետ հաղորդակցուած, ընկերութիւն ըրած է: Այդտեղ հանգրուանած են մեծեր, որոնց հետ նաեւ ես շփուելու պատիւը ունեցած եմ», ըսաւ կրտսեր Գասպարեանը:

Ճիւան Գասպարեանին նուիրուած շարք մը միջոցառումներ, համերգային ծրագրեր եւ այլ նախաձեռնութիւններ կեանքի պիտի կոչուին ոչ միայն Հայաստանի, այլեւ Ռուսիոյ մէջ: Սեպտեմբերին Ճիւան Գասպարեան կրտսերը, համագործակցելով Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբին հետ, որու գեղարուեստական ղեկավարն ու գլխաւոր խմբավարը Սերկէյ Սմբատեանն է, համերգային ծրագրով պիտի ներկայանայ Երեւանի մէջ:

Քանդակի հեղինակը ընդգծեց, որ վարպետի քանդակին միւս տարբերակը Գանձասարի Վանք գիւղին մէջ տեղադրուած է: «Ճիւանի հետ շփուելու ընթացքին, աւելի խոր ճանչնալով վարպետը, կրցած եմ ամէն ինչ ընել, որ իր կերպարին հարազատ մնայ: Աշխատած եմ ընել ամէն բան, որ կարենամ իսկական Ճիւանին մօտ արդիւնք ստանամ», ըսաւ Ալեքսան Պապայեանը:

ՀՀ ԿԳՄՄ Նախարար Վահրամ Տումանեան ընդգծեց, որ վարպետը տուտուկի ձայնը բարձրացուցած է այն մակարդակի, որ այսօր մենք բոլորս աշխարհի տարբեր անկիւններու մէջ հպարտութեամբ կը նշենք, որ սա մեր ազգային գործիքն է:

# Մեկնարկած Է Կիւմրիի Բարեկամութեան Այգիի Հին Բեմի Վերակառուցման Արշաւը




Կիւմրիի մէջ մեկնարկած է Բարեկամութեան այգիի հին բեմահարթակի վերակառուցման հանրային արշաւը, որուն նպատակն է դրամահաւաքի եւ հանրային ներգրաւուածութեան շնորհիւ պահպանել բացօթեայ բեմի պատմական տեսքն ու վերականգնել անոր երբեմնի մշակութային նշանակութիւնը:

Զբօսայգիի վերջնամասին մէջ տեղակայուած եւ 20 մեթր

Շար.ը էջ 15

## ՄԱՀԱԶԴ



*ՏԻԿ. ԱՆԱՀԻՏ ԽՈՒԼՈՊԵԱՆ (ՍԵԴՐԱԿԵԱՆ)*

*Սրտի դառն կսկիծով կը յայտնենք մեր սիրելի մօր, քրոջ, մեծ մօր Անահիտ Սեդրակեան Խրլոպեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Յունիս 29, 2022ին:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, Յուլիսի 19 2022, կէսօրուան ժամը 12:00ին, Սուրբ Ղեւոնդեանց Մայր Տաճարի մէջ, ապա թաղման արարողութիւնը ժամը 1:30ին* Hollywood Hills Forest Lawn *գերեզմանատունը:*

*Սգակիրներ՝ համայն Խուլոպեան, Սեդրակեան, Սարոյեան. Չրբաշեան, Պետրոսեան, Մարուխեան Վարդանեան եւ Զիրենց ընտանիքներ:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Ականաւոր երաժիշտ եւ մանկավարժ Անահիտ Խուլոբեան-Սեդրակեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն ականաւոր հայուհիի ընտանեկան համարն պարագաներու եւ մերձաւորներուն:*

## ՍԱՄՆՈՅ ԱՌԱՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 11-էն

*կան չրջանակներուն մօտ, որոնք կը ջանային դէպքը օգտագործել իրենց քաղաքական նպատակներուն համար: Անոնք Սուլթանին կը ներկայացնեն բարենորոգումներու ծրագիր մը, որ նախ կը մերժուի, սակայն հետագային կը հաստատուի Բ. Դուռան կողմէ: Այդ բարենորոգումները կը նախատեսէին իւրաքանչիւր վիլայէթի մէջ՝ կուսակալներու կողքին ոչ-մահմետական տեղակալներու նշանակումը, որ պաշտօն ունի գործակցելու ընդհանուր նահանգի գործերու պատրաստութեան ու կարգադրութեան աշխատանքներուն: Նոյնպես՝ ոչ-մահմետական օգնականներ կը նշանակուին միւթեսարիֆներուն եւ գայմագամներուն մօտ, ուր բնակչութեան թիւը անհրաժեշտ կը դարձնէր: Գայմագամները կ՚ընտրուին առանց կրօնի խտրութեան, Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ հիմնուած քաղաքային դպրոցի վկայական ունեցողներէն եւ հաստատուած կայսերական իրատէով եւ նման այլ կէտեր:*

*Սակայն, այս բարենորոգումներու գործադրութիւնը տարբեր պատրուակներով կը ձգձգուէր՝ մեծ դժգոհութիւն յառաջացնելով Հայութեան մօտ:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

Name: ---------------------------------
Address: --------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :-----------------------
Email: -------------------------


## Պատկառելի 190ամեակ

Շարունակուած էջ 13-էն

*աւելի ներկայանալի դարձնելու ազգապարծան հաստատութիւնը ներքնապէս եւ արտաքինով:*

### Յիւանդանոցին Մատուռը

*Ս. Փրկիչ Հիւանդանոցը օրհնուած է գողտրիկ քարաշէն մատուռով մը՝ փայտաշէն հին մատուռին տեղ, որ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի օրով կառուցուած էր եւ 1906 թուին օծուած: Համբարձման տօնը մեծահանդէս կը տօնուի ամէն տարի սոյն մատրան մէջ ուխտաւորներու եւ հաւատացեալներու ներկայութեամբ: Մատուռը ունի իր մնայուն քահանան: Ս. Փրկիչ Հիւանդանոցը տարիներէ ի վեր կը հրատարակէ «Սուրբ Փրկիչ» ամսագիրը 1949 Սեպտեմբերէն սկսեալ, որմէ առաջ «Ընդարձակ Օրացոյց»ներ կը հրատարակուէին: Ամսագրին նպատակը եղած է «Գթութեան տան հետ համայնքի սրտին եւ հոգիի կապը ամրապնդել, իրազեկ դարձնել զայն անցուդարձերուն, բազմատեսակ բժշկագիտական գիտելիքներով»: Սոյն գրութիւնը պատրաստեցի յիշեալ ամսագրի հերթական թիւերու տուեալներուն վրայ:*

### Պատրիարքարանն ու Յիւանդանոցը

*Սոյն երկու մեծ հաստատութեանց գոյակցութիւնը յաչս Օսմանեան եւ ապա Հանրապետական Թուրք պետութեանց մնացած է միշտ ապահով եւ յարգալից, նկատի ունենալով որ միայն հայեր չեն որ հիւանդանոց ընդունուած են, այլ նաեւ երկրին նպատակները անխտիր: Հիւանդանոցի բարելաւման ու մշտական գործունէութեան հսկողները եղած են հոգաբարձական կազմի բժշկական եւ պետութեան մօտ վստահելի ու անուանի անձեր որոնք միշտ հաստատ յարաբերութեան մէջ եղած են թէ պետութեան եւ թէ Պատրիարքարանին հետ: Ներկայիս հիւանդանոցի Հոգաբարձութեան ատենապետն է համայնքի առաջնորդող ազգայիններէն Տիար Պետրոս Շիրինօղլու: Անկասկած, Հիւանդանոցը որպէս հայկական ազգային հաստատութիւն Թուրք պետական մականին ներքեւ, երկար տարիներու բարւոք եւ բարձրորակ գործունէութեամբ յաչս պետութեան շատ կարեւոր եւ անհրաժեշտ հիմնարկ մը պէտք է նկատուի, որուն համար եւս ընտրանի եւ պատասխանատու բժիշկներ եւ ազգայիններ, իրենց որակաւոր ու մասնագիտական տուեալներով, եւ պոլսահայութեան շարունակական նիւթական աջակցութեամբ ամէն ապահովութիւն ընծայած են Հիւանդանոցին պետութեան հայեացքին ներքեւ:*

---

## Մեկնարկած է Կիւմրիի Բարեկամութեան

Շարունակուած էջ 14-էն

*երկարութեամբ ձգուող բեմահարթակը 1988-ի երկրաշարժէն յետոյ կը գտնուի վթարային վիճակի մէջ. այն փլուզման վտանգէն փրկելու համար, առաջնային է ամրակայումը: Հանրային դրամահաւաքի շնորհիւ հնարաւոր պիտի ըլլայ կանխել բեմահարթակի փլուզումը եւ վերակառուցման աշխատանքներ իրականացնել:*

*Դրամահաւաքը պիտի տեւէ շուրջ երեք ամիս՝ մինչեւ Սեպտեմբերի վերջ, որուն նպատակն է հաւաքագրել 100 հազար տոլար: Դրամահաւաքին կրնան միանալ բոլոր ցանկացողները Հայաստանէն, Սփիւռքէն եւ ամբողջ աշխարհէն, այդպիսով՝ իրենց ներդրումը ունենալով հին բեմահարթակի վերակառուցման գործին մէջ:*

*Այգիի հեղինակային ճարտարապետական խումբին կողմէ մշակուած է այգիի բեմահարթակի վերակառուցման նախագիծը, ձգտելով զայն դարձնել ժամանակակից եւ իւրօրինակ կառոյց: Վերականգնուած բեմահարթակը հնարաւորութիւն պիտի ընձեռէ Կիւմրիի եւ ամբողջ Հայաստանի երաժշտական, պարային եւ թատերական խումբերուն ելոյթ ունենալու քաղաքի նոր հանրային բացօթեայ բեմին վրայ:*

*Այգին իր տեսակով պիտի ըլլայ եզակի ամբողջ Հայաստանի մէջ եւ բացի վերականգնուած պատմական բեմէն, պիտի ունենայ բազմաթիւ այլ կէտեր՝ մանկական եւ մարզական խաղահրապարակներ, սահադաշտ, Վերնիսաժ, Այգեգործութեան դպրոց եւ այլն:*

*Բարեկամութեան այգիի վերակառուցման ծրագիրը կ՚իրականացնէ «Զբօսաշրջութեան եւ քաղաքաշինութեան»* (TUF) *բարեգործական հիմնադրամը մասնաւոր-հանրային համա-գործակցութեան ձեւաչափով: Վերականգնուած զբօսայգին ոչ միայն պիտի նպաստէ Կիւմրիի մշակութա-յին կեանքի զարգացման, այլ նաեւ պիտի խթանէ զբօսաշրջային աճը:*

*Ներկայիս այգիի տարածքին կ՚ընթանան շինարարական աշխատանքներ: Այգիի որոշ բաժիններու շինարարութիւնը կը նախատեսուի աւարտին հասցնել այս տարուան աշնան, որմէ յետոյ զբօսայգին բաց պիտի ըլլայ կիւմրեցիներու եւ քաղաքի հիւրերուն համար: 2023-ի աշնան կը նախատեսուի շահագործման յանձնել ամբողջ զբօսայգին իր բոլոր բաժիններով:*


# ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

## Նովակ Ջոկովիչը Նուաճեց «Մեծ Սաղաւարտի» Մրցաշարերու 21-րդ Տիտղոսը



Աշխարհի նախկին առաջին ռակետ, սերպ Նովակ Ջոկովիչը 7-րդ անգամ ըլլալով նուաճեց Ուիմպլտոնի մրցաշարի յաղթողի տիտղոսը:

Եզրափակիչին աշխարհի երրորդ ռակետը մրցեցաւ 40-րդ ռակետ, աւստրալացի Նիկօ Կիրիոսի հետ եւ առաւելութեան հասաւ չորս սեթի ընթացքին՝ 4:6, 6:3, 6:4, 7:6 (7:3): Պայքարը տեւեց 3 ժամ եւ 2 վայրկեան: Ան չորրորդ անգամ անընդմէջ յաղթեց Ուիմպլտոնի մրցաշարին:

Նովակ Ջոկովիչը 32-րդ անգամ հանդէս եկաւ «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու եզրափակիչին եւ նուաճեց 21-րդ տիտղոսը: Այդ ցուցանիշով ան գերազանցեց զուիցերլացի Ռոջեր Ֆետերերին, որ 31 անգամ խաղցած է «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու եզրափակիչներուն՝ 20 յաղթանակի արժանանալով: Երրորդը սպանացի Ռաֆայել Նատալն է, որ մասնակցած է 30 եզրափակիչի, արձանագրելով 22 յաղթանակ:

## Ելենա Ռիբակինան՝ Ուիմպլտոնի Մրցաշարի Յաղթող



Ղազախստանի ներկայացուցիչ Ելենա Ռիբակինան նուաճեց Ուիմպլտոնի մրցաշարի կանանց մենախաղի յաղթողի տիտղոսը:

Եզրափակիչին աշխարհի 23-րդ ռակետը մրցեցաւ երկրորդ ռակետ, Մարոքքոյի ներկայացուցիչ Օնս Ժապերի հետ եւ առաւելութեան հասաւ երեք սեթով՝ 3:6, 6:2, 6:2: Մրցախաղը տեւեց 1 ժամ եւ 51 վայրկեան:

Երկու թենիսիստուհիներն ալ առաջին անգամ կը հասնէին «Մեծ սաղաւարտի» մրցաշարի եզրափակիչ:

## Մ-20 ԵԱ. Հայաստանի Հաւաքականը Յաղթեց Վրացիներուն



Պասքեթպոլի կանանց մինչեւ 20 տարեկաններու Հայաստանի հաւաքականը յաղթանակով սկսաւ Հիւսիսային Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյէի մէջ տեղի ունեցող Եւրոպայի առաջնութեան B բաժնի ենթախումբի մրցաշարին:

Առաջին հանդիպումին հայ պասքեթպոլիստուհիները մրցեցան Վրաստանի խումբին հետ եւ առաւելութեան հասան 49:46 արդիւնքով:

Առաջին քառորդին Հայաստանի խումբը առաջ էր 14:10 արդիւնքով: Յաջորդ երկրորդ քառորդներուն աւելի յաջող խաղցան վրացիները՝ 11:9, 17:10: Չորրորդ քառորդին Սուրէն Արզումանեանի գլխաւորած խումբը յաղթեց:

## ՊՍԺ-Ն Կը Փորձէ Գնել Ռոբերտ Լեւանդովսկիին

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ը կը կը փորձէ ձեռք ձգել Գերմանիոյ ախոյեան Միւնիխի «Պայըրնի» 33-ամեայ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկիին: Փարիզեան ակումբի ղեկավարութիւնը կը ցանկայ յարձակման գիծին տեսնել ֆրանսացի Կիլիան Մպապէ եւ Ռոբերտ Լեւանդովսկի զոյգը, կը հաղորդէ ֆրանսական L'lquipe-ը:

Ռոբերտ Լեւանդովսկին ձեռք բերելու մտադրութիւն ունի նաեւ Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնան»: Ռոբերտ Լեւանդովսկին մտադիր չէ արձակուրդէն յետոյ վերադառնալ «Պայըրն», որու հետ անոր պայմանագիրը նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը:

Անցած մրցաշրջանին Լեւանդովսկին «Պայըրնի» հետ մասնակցած է 50 հանդիպման, նշանակելով 46 կոլ:

## Կարեթ Պեյլը Ժամանած է Լոս Անճելոս



Կալէսի (Ուելսի) հաւաքականի առաջատար Կարեթ Պեյլը ժամանած է Լոս Անճելոս: 32-ամեայ ֆութպոլիստը կը միանայ ՄԼՍ-ի «Լոս Անճելոս» ակումբին: Կողմերը կնքած են մէկ տարուայ պայմանագիր:

Պեյլը «Լոս Անճելոսի» մարզադաշտին մէջ հանդիպած է խումբի նորեկ, Իտալիոյ հաւաքականի եւ «Եուվենտուսի» նախկին պաշտպան Ճորճիօ Կիելինիի հետ, նաեւ շնորհաւորել խումբի «Լոս Անճելոս Կելաքսիի» նկատմամբ 3:2 արդիւնքով յաղթանակը:

## ՊՍԺ-Ն Դէմ Չէ Ռոնալտուի Փոխադրման

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի ղեկավարութիւնը դէմ չէ անգլիական «Մանչըսթըր Եունայթըտի» 37-ամեայ փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուին ձեռք բերելուն, կը հաղորդէ Փարիզեան ակումբի մարզական տնօրէն Լուիշ Կամպուշը: Ակումբը կը բանակցի Ռոնալտուի գործակալ Ժորժէ Մենդեշի հետ:

Ռոնալդուն «Մանչըսթըր Եունայթըտի» հետ չէ մեկնած Թայլանտ եւ կը մարզուի Փորթուկալի մէջ:

Ան կը ցանկայ յաջորդ մրցաշրջանին հանդէս գալ Ախոյեաններու Լիկայի մէջ, «Մանչըսթըր Եունայթըտ» նուաճած է Եւրոպայի Լիկայի ուղեգիր:

Ռոնալտուի պայմանագիրը մանչըսթըրեան ակումբին հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը:

## Փօլ Պոգբան Ժամանեց Թուրին Եւ Կը Միանայ «Եուվենթուսին»



Աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի կիսապաշտպան Փօլ Պոգբան ժամանեց Թուրին եւ պայմանագիր կը կնքէ «Եուվենթուսի» հետ:

29-ամեայ ֆութպոլիստի պայմանագիրն անգլիական «Մանչըսթըր Եունայթըտի» հետ աւարտած է, եւ ան ունի ազատ գործակալի կարգավիճակ:

Փօլ Պոգբան «Եուվենթուսի» հետ հանդէս եկած է նաեւ 2012-2016 թուականներուն:

## «Զենիթ» Նուաճեց Ռուսաստանի Սուփերգաւաթը

Ռուսաստանի ախոյեան «Զենիթը» երրորդ տարին անընդմէջ նուաճեց Ռուսաստանի սուփերգաւաթը: Սանկտ Պետերպուրկի «Գազպրոմ Արենայի» մէջ տեղի ունեցած խաղին «Զենիթ» ընդունեց գաւաթակիր «Սպարտակին» եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

Հաշիւը 29-րդ վայրկեանին բացաւ ռուս յարձակող Իվան Սերկէեւը: 34-րդ վայրկեանին «Զենիթի» առաւելութիւնը կրկնապատկեց պրազիլացի յարձակող Մալկոմը: 46-րդ վայրկեանին դաշտի տէրերու երրորդ կոլը նշանակեց պրազիլացի կիսապաշտպան Վենտելը: Չորրորդ կոլը աւելացուած ժամանակին նշանակեց քոլումպիացի յարձակող Մաթէօ Կասիերան:

«Զենիթ» 7-րդ անգամ նուաճեց Ռուսաստանի սուփերգաւաթը:

## Դատարանը Արդարացուցած Է Պլատըրին Եւ Փլաթինիին

Զուիցարական դատարանը արդարացուցած է ՖԻՖԱ-ի նախկին նախագահ, զուիցարեացի Ճեպ Պլատըրին եւ ՈւԵՖԱ-ի նախկին նախագահ, ֆրանսացի Միշել Փլաթինիին, որոնք կը մեղադրուէին խարդախութեան, անբարեխիղճ կառավարման, վստահութեան չարաշահման եւ արժեթուղթերու կեղծման մէջ, կը հաղորդէ AFP-ն:

Զուիցերիոյ դատախազութիւնը կը պահանջէր 18 ամսուայ բանտարկութիւն իւրաքանչիւրին համար:

2011 թուականին Պլատըրը Փլաթինիի համար կազմակերպած էր 2 միլիոն զուիցերական ֆրանքի պանքային փոխանցում: Գլխաւոր դատախազութիւնը կը պնդէր, որ գումարը Փլաթինին ստացած է առանց որեւէ օրինական հիմնաւորման եւ ի վնաս ՖԻՖԱ-ի ֆինանսական միջոցներուն:

Պլատըրը յայտարարած էր, որ Փլաթինին գումարը ստացած է 1998-2002 թուականներուն կատարած խորհրդատուական աշխատանքի համար: Փլաթինին այդ գումարը ստանալու պատճառով 8 տարիով հեռացուած էր ֆոթպոլային գործունէութենէն: Յետագային անոր որակազրկումը կրճատուած էր մինչեւ 6 տարի: